

# ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزیک

مجلة رياضية شهيرة  
تصدرها جمعية الهومنمن بيروت

marzig  
SPORTS MAGAZINE

38-րդ ՏԻԻԻ, 2019, ԹԻԻ 414 VOL. XXXVIII № 414 السنة الثامنة والثلاثون - عدد رقم 414

## ՄԷ՛Կ ԱԶԳ, ՄԷ՛Կ ՀԱՅՐԵՆԻՔ

## ԱՐՅԱԽԻ ՄԷՁ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԾԻՂ,  
ՇՔԵՐԹ ԵՒ ԲԱՆԱԿՈՒՄ





# Հ.Մ.Ը.Մ.Ի 111-ԲԳ ՄԱՄՆԱՃԻՒՂԸ՝ Հ.Մ.Ը.Մ. ԱՐՑԱԽ

**Հ.**Մ.Ը.Մ.ի երկրորդ հարիւրամեակի ծրագիրներուն առաջնահերթութիւնը Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը հիմնելու անհրաժեշտութիւնն էր:

Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը ունենալու գաղափարը տարիներու փափաք էր, սակայն զանազան պատճառներով աշխատանքի մեկնարկը յետաձգուած էր: Միութեան 100-ամեակի ձեռնարկներուն ամբողջացումէն ետք, Կեդրոնական Վարչութեան աշխատանքները կեդրոնացան Արցախի մէջ մասնաճիւղի մը հիմնադրութեան վրայ: Խորհրդակցութիւններէ ետք, Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի հետ տեղի ունեցաւ տեսակցութիւն մը, որուն ընթացքին արծարծուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան նպատակն ու հեռանկարները: Նախագահ Բակո Սահակեան իր դրական համագործակցութեան պատրաստակամութիւնը փոխանցեց այս ուղղութեամբ:

Առ այդ, յաջորդող ամիսներու նախապատրաստական աշխատանքներէն ետք, 2 Յուլիս 2019-ին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատուիրա-



կութիւն մը, գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին, մեկնեցաւ Արցախ, ուր գումարուեցաւ անդրանիկ անդամական ժողով եւ ընտրուեցաւ վարչութիւն՝ բաղկացած հետեւեալ եղբայրներէն.- Սեւակ Պօղոսեան, Դաւիթ Գրիգորեան, Արտակ Իշխանեան, Վրէժ Էսմէրեան եւ

Վահրամ Յովսէփեան:

Զուգահեռաբար, Կեդրոնական Վարչութիւնը երկամսեայ ժամանակաշրջանով Արցախ գործուղեց խմբապետ մը, որպէսզի անհրաժեշտ գիտելիքները փոխանցէ նորակազմ խմբապետական կազմին:

Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի Սեկուսի շրջանի հիմնադրութիւնը պաշտօնապէս պիտի կատարուի Օգոստոս 2019-ին, պետական ու ժողովրդային ներկայութեամբ:

12 Յուլիս 2019

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱԱՏ ՀԱՐԻՐԻԻ ՀԵՏ

25 Յուլիս 2019-ի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրիին հետ հանդիպում մը ունեցաւ վարչապետարանի գրասենեակին մէջ:

Հանդիպումին ընթացքին եղբ. Մկրտիչեան վարչապետին ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ կառոյցն ու գործունէութիւնը: Վարչապետ Սաատ Հարիրի իր դրական տպաւորութիւնները փոխանցեց եւ դրուատիքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան մասին:

Եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց վարչապետին Հ.Մ.Ը.Մ. Ֆրանսին (Փարիզ) երկար տարիներ իր կատարած նիւթաբարոյական օժանդակութեան համար: Իր կարգին, վարչապետ Սաատ Հարիրի շնորհաւորական խօսքով անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններուն, համագործակցութեան շարունակման պատրաստակամութեամբ:





## ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



### ՅԱՉՈՐԴ ԹԻՒՈՎ

«Մարզիկ»ի յաջորդ թիվը նուիրուած է Հ.Մ.-Ը.Մ.ի ԺԲ. Պատգամատրական Ժողովին, Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի 30-ամեակի տօնակատարութեան եւ Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրիի Հ.Մ.Ը.Մ.ի Կերրոնական Վարչութեան կողմէ «Արտակարգ» շքանշանով պարգևատրման:

- ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԷ՛կ ազգ, մէ՛կ հայրենիք **2-3**
- ՊԱՏԳԱՍ **4-5**
- Հ.Մ.Ը.Մ. ԱՐՑԱԽԻ ՄԵՋ **6-11**
- ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՆ **12-13**
- ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Է. ՄԱՐԶԱԽԱՂԵՐ **14-23**
- ԻՐԱԳՈՐԾՈՒՄ **24-28**
- ՄԱՍՆԱԾԻՒՂԷ ՄԱՍՆԱԾԻՒՂ **29-39**



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Գրիգորիս Պողարեան, Մարո Էէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան:

**Վարչական կազմ:** Պարթիկ Կիւլպէնկեան, Արօ Մոսիկեան, Սիրլա Սաղրբեան, Յարութ Ալանաճեան, Նազօ Հապիպեան, Ռիթա Օղուլեան, Արլին Շամնասեան:

**Էջադրում եւ ընդհանուր ձեւաորում:** Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյանճեան, **Տպագրութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաճանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու քաճանորդներու: Տարեկան քաճանորդագրութեան սակ ձեռքուած է՝ Լիբանան 25 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 50 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 55 \$: Լիբանանի մէջ թերթին հատարածաւորի սակն է 5000 Լ.Ո.: **Յրում:** «Մարզիկ»ի ցրտանը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրտիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է սրանալ նաեւ «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը սրացուի «Liban post»-ի միջոցով:

# ՄԷ՛Կ ԱԶԳԻ, ՄԷ՛Կ ՀԱՅՐԵՆՆԻՔ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

**Տ**արիներու երազ մը իրականացաւ. Հ.Մ.Ը.Մ. իր մասնաճիւղը ունեցաւ ազատագրեալ, ազատ ու անկախ Արցախի մէջ: Միութիւնը արմատ նետեց պատմական հայրենիքի մէջ, Արցախի հերոսական ու նուիրական հողին մէջ:

Այն հողին, որուն՝ Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց մանկութենէն կապուեցան իր երազին հասնելու հայ մարդու հաւատքով, դաստիարակութեամբ եւ հայրենասիրութեամբ:

Այն հողին, որուն պատմութիւնը դարերու խորերէն եկող ազգային իմաստութիւն եւ ոգի փոխանցեց յաջորդական սերունդներու: Երկիր հասկացողութիւնը վերածեց ոգեղէն արժէքի, սրբութիւն սրբոցի, որուն համար արժեք յանձն առնել ամէն զոհողութիւն:

Ու նաեւ՝ այն հողին, որուն ազատութեան սիրոյն շատեր արիւթեան փառքը նուաճեցին, մինչ ուրիշներ, անոնց կարգին Հ.Մ.Ը.Մ.ականներ, իրենց կեանքը ընծայեցին ու անմահացան:

Հ.Մ.Ը.Մ. արմատ նետեց «անյաղթելի մի բուն աշխարհ»: Մասնաճիւղ հիմնեց, մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ շքերթ կազմակերպեց եւ Ասկերանի մէջ ըսկառուական անդրանիկ բանակուեց կատարեց, անգամ մը եւս փաստը տալով, որ ինք կը մնայ մնայուն ճիգի, գործի եւ պրկուած կամքի այն միութիւնը, որ հարազատօրէն կը ծառայէ իր կոչումին:

Հ.Մ.Ը.Մ. Արցախ մտք գործեց այն պահուն, երբ թշնամին մէկ կողմէ կը ջանար քաղաքական-դիւանագիտական շրջափակումի ենթարկել հայրենիքը, իսկ միւս կողմէ՝ ասպահովական խախտումներով կը սպառնար սահմանին ամբողջ երկայնքին: Հ.Մ.Ը.Մ. արհամարհեց բոլոր դժուարութիւններն ու վտանգները, վերցո՛ց իրեն նետուած ձեռնոցը եւ աշխարհասփիւռ մասնաճիւղերուն կարելիութիւնները ի սպաս դրաւ՝ կերտելու համար «Հսկայ նուիրման» բանակը Արցախի:

Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութիւնը Արցախի մէջ, իբրեւ համահայկական կառոյցով միութիւն, եկաւ շեշտելու կարեւորութիւնը Սփիւռք-Հայաստան-Արցախ եռամիասնու-



թեան, որուն դիմաց կը չէզոքանան ներքին ու արտաքին բոլոր մարտահրաւիրները եւ թափ կ'առնեն նոր յաղթանակներու առաջնորդող համահայկական մեր կարելիութիւնները:

Վաղուան պատմագիրը ոսկի տառերով պիտի արձանագրէ 22 Օգոստոս 2019-ը, Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղին ստեղծման թուականը. այն օրը, երբ միութիւնը իր 111-րդ մասնաճիւղին հիմնադրութիւնը յայտարարելով, համայն աշխարհին ներկայացուց հայրենիքի հզօրացման եւ զարգաց-

ման երթին գործնապէ՛ս մասնակից դառնալու իր պատրաստակամութիւնը: Արցախի համար ապրած ու գործած միութիւնը, Արցախի համար նահատակներ տուած միութիւնը ի վերջոյ սկսաւ գործել Արցախի դարաւոր հողին վրայ, ուրկէ բացակայ էր ան իր ամբողջ պատմութեան ընթացքին:

Կարիքը կա՞յ յիշեցնելու, որ 70 տարուան ակամայ բացակայութենէ ետք, Հ.Մ.Ը.Մ. Հայաստան վերադարձաւ 1989-ին: Այնուհետեւ ան հասաւ Ջաւախք: Հասաւ Թիֆլիս ու Մոսկուա: Բայց չկարողացաւ հասնիլ Արցախ: Բազմիցս փորձեց, չյաջողեցաւ, մինչեւ որ պայմանները հասունցան եւ շատեր անդրադարձան, որ Հ.Մ.Ը.Մ.ի համար սկառուութիւնն ու մարզախաղերը երբեք ինքնանըպատակ հաճոյքի եւ ժամանցի սահմաններուն մէջ չեն մնացած: Հ.Մ.Ը.Մ. անոնց տուած է սովորականէն տարբեր, լայն շրջագիծ եւ խոր իմաստ: Առօրեան եւ ընթացիկը գերազանցելու պարտականութիւն մը, մարմնակերթանքը դարձնելով ազգային կազմակերպումի, ինքնութեան եւ տոկոսութեան կարեւոր գործօն: Հայը աւելի՛ հայացնելու միջոց, անցեալի ժառանգութիւններով եւ ներկայի նուաճումներով հպարտանալու առիթ:

Հ.Մ.Ը.Մ. արմատ նետեց Արցախի մէջ եւ հակադրուեցաւ այլամերժութեան, ատելութեան եւ բռնութեան բոլոր երեւոյթներուն, մարմնակերթական իր գործունէութեամբ տարածելով սիրոյ, միասնականութեան եւ գործակցութեան սկզբունքները: Հ.Մ.Ը.Մ. Արցախի մէջ լծուեցաւ





պատրաստութեանը ֆիզիքական եւ հոգեմտաւոր կազմաւորումի տէր, արի, կարգապահ եւ հաստատոր սերունդներու, որոնք միշտ պատրաստ պիտի ըլլան ծառայելու իրենց տեղական, ազգային եւ միջազգային համայնքներուն՝ ի շահ հայրենիքին ու հայութեան:

Վերջապէս, Արցախի մասնաճիւղին հիմնադրութեամբ, Հ.Մ.Ը.Մ. ստացաւ ԸՆԴ-ՀԱՆՈՒԹ միութեան իրական իմաստը, որովհետեւ ան իր գաղափարականին շուրջ համախմբեց հայութեան ամբողջութիւնը՝ Սփիւռքը, Հայաստանն ու Արցախը:

Հօգո գաղափարական մը, որ միտք, հոգի եւ մարմին կրթող նպատակներէ վե՛ր ու անդին, միութեան հիմնա-

կան նպատակ կ'առաջադրէ՝

Հայութեան ամբողջականութեան պահպանումը,  
Հայութեան ներուժին համախմբումն ու արդիւնաւէտ օգտագործումը,

Հայութեան բովանդակ իրատուցներուն հետապնդման անհրաժեշտութիւնը,

Մէկ խօսքով՝ հայութեան գոյամարտին ամբողջ իմաստը, ազգային մեր նպատակները միասնաբար իրականացնելու կամքն ու վճռականութիւնը, ի խնդիր մէկ ազգի ու մէկ հայրենիքի կերտման համահայկական մեր մեծ տեսլականին:

### Հ.Մ.Ը.Մ.Ի 25 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՌՈՐՆԵՐ

**Հայաստան:** Երեւան, Մալաթիա, Ջէյրոն, Կոմիտաս, Էրեբունի, Արովեան, Չարեւնցաւան, Հրազդան, Արմաւիր, Էջմիածին, Մարտունի, Կիւմրի, Վերի. **Արցախ:** Սյրեւանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուս. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պորո Համուր, Այնճար, Գինի, Անթիլիաս, Բրդէյոտ, Պատշրիէ, Ռաուրս. **Սուրիա:** Հալէպ, Կամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եսֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղդադ, Մուսուլ. **Քուէթ:** Քուէթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելասկի. **Անգլիա:** Լոնդոն. **Աւստրիա:** Վիեննա. **Ճրանաս:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ամսթըր, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոդերթեյլա. **Պուլիստիա:** Սոֆիա, Ռուսէ, Փրովրիվ, Վառնա, Շուսեմ, Պուրկաս, Տայրիչ. **Գանապա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիճ, Մէնք Գաքքինգ, Լասկ, Վանքովր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելէս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթրէալ, Փասսարինա, Կլէմոնթ, Օրէնն Բաունթի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէլօ, Ինլընդ Էմիլայթ, Սանթա Գարսա, Էրեստերա Հովիթ, Պրոպէր, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլմաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ, Սանթա Էլարիթա. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքի, Շիքսօ, Ֆիլադելֆիա, Տիքոնթ, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպրի, Շարլոթ, Մերիլէք Հովիթ. **Հարաւային Ամերիկա:** Պուերտօ Սպէս, Գորդոպա, Մոնթեվիդէօ. **Աւստրալիա:** Սիդնի («Անդրանիկ»), Սիդնի («Արարս»), Սիդնի («Կամք»), Սիդնի («Արարար»), Մելբուռն.



# ԱՐՑԱԽԸ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՄ Է, ՀԵՐՈՍԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ Է, ԴԱՐԱՒՈՐ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՄ Է

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 22 ՕԳՈՍՏՈՍ 2019)

**Ա**յսօր, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան արդի պատմութիւնը կը հարստանայ նոր թուականով մը:

Այսօր, պաշտօնապէս ծնունդ կ'առնէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 111-րդ մասնաճիւղը Արցախի Հանրապետութեան մայրաքաղաքին՝ Ստեփանակերտի մէջ:

101 տարուան մեր միութեան համար սովորական իրադարձութիւն մը չէ այս, որովհետեւ նորաստեղծ մասնաճիւղը ինք սովորական մասնաճիւղ մը չէ, ինչպէս աշխարհի տարածքին հայկական որեւէ համայնքի մէջ ստեղծուած մասնաճիւղ:

Արդարեւ, Արցախը աշխարհագրական վայր ըլլալէ առաջ մեզի համար պատմութիւն է, հերոսական հայրենիք է եւ դարաւոր հպարտութիւն: Հայրենիքի այս հատուածը պահելու եւ պահպանելու համար ազգովին վճարած ենք շատ սուղ գին: Բարբարոսներ եկած ու անցած են նուիրական այս հողէն: Տասնամեակներ շարունակ տեսակաւոր զրկանքներ պարտադրուած են այս հողին վրայ ապրող մարդոց, սակայն շնորհիւ արցախցիին կամքին, շնորհիւ աշխարհի հայութեան

զօրակցութեան, հայրենիքը ազատագրուած է, անկախացած է եւ լծուած է պետականաշինութեան կարեւոր գործին:

Անցնող 30 տարիներուն, Արցախը եղած է կիզակէտը համայն հայութեան: Հայութիւնը ոչինչ խնայած է Արցախը հզօր, իսկ արցախահայութիւնը ամուր տեսնելու համար: Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իր կարգին, Արցախը դարձուցած է մնայուն ուշադրութեան առարկայ: Արցախը իր կարեւոր տեղը ունեցած է միութեան դաստիարակչական ծրագրներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ականներ հասակ առած են Արցախի սէրով, Արցախին ծառայելու եւ ի հարկին Արցախին համար զոհուելու պատրաստակամութեամբ: Ու չմոռնանք, որ Հ.Մ.Ը.Մ. իր նահատակները ունի Արցախեան պայքարին. Վարդան Բախշեանը, Վաչէ Ռոստմեանը, Վիգէն Զաքարեանը եւ ուրիշներ իրենց արեամբ գրեցին Արցախի նորօրեայ մեր պատմութիւնը:

Ու երբ միութիւն մը դաստիարակութեամբ, զոհաբերութեամբ Արցախի հետ կ'ըլլայ, բնական է, որ ան նաեւ Արցախի մէջը ըլլայ: Կազմակերպական ներկայութիւն եւ միութեանական գործունէութիւն ունենայ: Բան մը, որ երկար տարիներ կարելի չէր իրագործել զանազան պատճառներով:

Սակայն այսօր, պայմանները հասունացած ըլլալով, իշխանութիւններու քաջայերանքով, ահաւասիկ, քանի մը ամսուան նախապատրաստութենէ ետք, Հ.Մ.Ը.Մ. իր 111-րդ մասնաճիւղը կը հիմնէ Ստեփանակերտի մէջ, նպատակ ունենալով ըսկառութեան ճամբով ծառայել չըջանի պատանի սերունդին դաստիարակութեան գործին, տիպար քաղաքացիներու, մտքով ու մարմնով առողջ մարդոց պատրաստութեան վեճ աշխատանքին:

Հ.Մ.Ը.Մ., իր քայլերգին բառերով, մեր ժողովուրդին «Կամաւոր բանակ»ն է: «Բանակ մը», որ ահա, այսօր կու գայ իր բոլոր կարեկիւրութիւնները ի սպաս դնելու Արցախի մեր պետականութեան եւ բանակին, իր շարքերուն մէջ հասակ առնող





արի ու կայտառ երիտասարդութիւնը ուղղելով դէպի հայրենիքի ծառայութեան նուիրական դաշտ:

Հ.Մ.Ը.Մ. մեր ժողովուրդի երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնն է, որ կը գործէ աշխարհի 26 երկիրներու մէջ, աւելի քան 26 հազար անդամներով: Այսօր, բոլորին հայեացքները ուղղուած են այստեղ, արցախցի իրենց քոյր-եղբայրներուն: Բոլորը յաջողութիւն կը ցանկան Ստեփանակերտի նորաստեղծ մասնաճիւղին եւ անխտիր բոլորը իրենց բովանդակ կարելիութիւնները կը դնեն մասնաճիւղին տրամադրութեան սակ, որպէսզի ան ամրանայ, հզօրանայ, իրմով մեր ժողովուրդն ու պետականութիւնը ամրանան ու հզօրանան:

Այս առթիւ, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, շնորհակալութեան խօսք ունիմ Արցախի պետական պատասխանատուներուն եւ յատկապէս նախագահ Բակօ Սահակեանին, որոնք անվարան դնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը ունենալու մեր աւազարկը եւ կարելի ամէն աջակցութիւն ցուցաբերեցին մեզի:



Վարձքը կատար, մասնաճիւղի հիմնադիր կորիզի անդամ-



ներուն, որոնք երկու ամիսէ ի վեր արդէն լծուած են մեծ աշխատանքի:

Բարի երթ եւ յաջողութիւն մասնաճիւղի յառաջիկայ բոլոր ծրագիրներուն եւ աշխատանքներուն:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը եւ կեցցէ՛ իր գաւակները Հ.Մ.Ը.Մ.ին փաստանոց Արցախի մեր սքանչելի ժողովուրդը:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Reservations** **Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

Studio/ICEH 2005 P&S





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿՐՑԱԽԻ ՄԱՄՆԱԾԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

**Հ**ինգչարթի, 22 Օգոստոս 2019-ի առաւօտեան ժամը 9-ին, Արցախի Հանրապետութեան մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ, պաշտօնական արարողութեամբ մը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 111-րդ մասնաճիւղին հիմնադրութիւնը՝ հայրենի աշխարհի պատմական ու հերոսական շրջանին մէջ:

Արարողութիւնը իրենց ներկայութեամբ պատուեցին Արցախի նախագահ Բակօ Սահակեան, պետնախարար Գրիգորի Սահակեան, արտաքին գործոց նախարար Մասիս Մայիլեան, մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ զբօսաշրջութեան նախարար Լեւոնիկ Յովհաննիսեան, կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի նախարարի տեղակալ Գէորգ Լուսինեան, Արցախի թեմի Առաջնորդ Պարգեւ Արք.

Մարտիրոսեան, Արցախի Հանրապետութեան Մերձաւոր Արեւելքի ներկայացուցիչ Կարօ Քէպապճեան, Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան եւ Կեդրոնական Կոմիտէի անդամներ, Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Արցախի գրասենեակի տնօրէն Հերմինէ Աւագեան, ինչպէս նաեւ՝ բազմաթիւ հիւրեր եւ հրաւիրեալներ: Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան:

Նորաստեղծ մասնաճիւղին հրաւե-

րով, պաշտօնական արարողութեան ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի քոյր շրջանի սկստական մէկ պատուիրակութիւնը՝ սկստական շեփորախումբի ընկերակցութեամբ:

### ԲԱՅՈՒՄԸ ԵՒ ՊԱՐԳԵՒ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՈՂՋՈՑՆԻ ԽՕՍԲԸ

Պաշտօնական արարողութիւնը տեղի ունեցաւ Ստեփանակերտի «Վերածընունդ» հրապարակին վրայ: Նախ, սկստական շեփորախումբի առաջնորդութեամբ հրապարակ մուտք գործեցին դրօշները Արցախի, Հայաստանի եւ 25 երկիրներու, ուր Հ.Մ.Ը.Մ.ը կը գործէ իր 110 մասնաճիւղերով: Հնչեց





Արցախ աշխարհ», նշեց Պարգեւ Սրբազան, այս առիթով շնորհալուրերով բոլորը եւ մաղթելով ամենայն բարիք, հայրենասիրութիւն, հաւատք եւ ազգային միաբանութիւն՝ յանուն մեր ապագային, այն կարգախօսով, զոր մեզի պատգամած են Սուրբ Վարդանանք՝ միշտ ծառայել «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:

Իր խօսքին աւարտին, Պարգեւ Սրբազան Տէրունական աղօթքով օրհնեց Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ մասնաճիւղը եւ արտասանեց «Պահպանիչ»:

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻՆ ԽՕՄԲԼ**

Այնուհետեւ, խօսք առաւ Արցախի Հանրապետութեան պետնախարար

Գրիգորի Մարտիրոսեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեծ դերակատարութիւն ունի նորահաս սերունդը հոգեպէս եւ մարմնապէս կրթելու գործին մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը հարուստ եւ բովանդակալից է: Հ.Մ.Ը.Մ. ունի համահայկական կառոյց եւ հայկական աւանդոյթներով կը միաւորէ աշխարհի 25 երկիրներու մէջ գործող իր 110 մասնաճիւղերը: Արցախի մասնաճիւղը կը հանդիսանայ Արցախ-Հայաստան-Սփիւռք եռամիասնութեան հանդիպման գօտին, շեշտեց ան:

Մարտիրոսեան մեծապէս գնահատեց հայրենիքը ճանչնալու եւ ճանաչելի դարձնելու, ամբողջ աշխարհի մէջ սփռուած հայ երիտասարդութիւնը միաւորելու Հ.Մ.Ը.Մ.ի պատասխանա-

Արցախի օրհներգը, որմէ ետք շեփորախումբը նուազեց Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգը:

Տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի, սկառտական դրօշի եւ միութեան կանոնագրի յանձնում՝ նորաստեղծ մասնաճիւղի վարչութեան: Դրօշները օրհնեց Արցախի թեմի Առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեան, որ այս առիթով արտասանեց ողջոյնի եւ օրհնութեան խօսք մը: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը համաշխարհային եւ համահայկական կազմակերպութիւն մըն է, որ 100 տարիէ կը գործէ ազգին համար՝ հայ երիտասարդները կրթելով իբրեւ հայրենասէր, մտածող եւ կոփուած անձեր, որոնք պատրաստ են յաղթահարելու ցանկացած դժուարութիւն եւ ձեռք բերել հայեցի ճիշդ մտածելակերպ:

«Այսօր ես սրտանց ուրախ եմ, որ Հ.Մ.Ը.Մ.ը վերջապէս մուտք կը գործէ







տըրուծիւնը, որ պատուով կատարած է ան տարիներ շարունակ: Ան մաղթեց, որ Արցախի նորաստեղծ մասնաճիւղը ըլլայ այդ առաքելութեան շարունակողը, մարզական եւ սկստական զանազան միջոցներով Արցախի երիտասարդութեան մօտ վառ պահելու համար հայրենասիրական ոգին՝ ազգային մեր դիմադրիչին համապատասխան:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԽՕՍԻԸ**

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Իր խօսքին սկիզբը, եղբ. Մկրտիչեան ըսաւ, որ 101 տարեկան Հ.Մ.Ը.Մ.Ի համար սովորական իրադարձութիւն մը չէ Արցախի մէջ մասնաճիւղի մը հիմնադ-

րութիւնը, որովհետեւ մասնաճիւղը սովորական մասնաճիւղ մը չէ, ինչպէս աշխարհի տարածքին հայկական որեւէ համայնքի մէջ ստեղծուող մասնաճիւղ: «Արցախը աշխարհագրական վայր ըլլալէ առաջ մեզի համար պատմութիւն է, հերոսական հայրենիք է եւ դարաւոր հպարտութիւն: Հայրենիքի այս հատածը պահելու եւ պահպանելու համար ազգովին վճարած ենք շատ սուղ գին», ընդգծեց ան:

«Անցնող 30 տարիներուն, Արցախը եղած է կիզակէտը համայն հայութեան, հաստատեց եղբ. Մկրտիչեան, Հայութիւնը ոչինչ խնայած է Արցախը հօգոր, իսկ արցախահայութիւնը ամուր տեսնելու համար: Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, իր կարգին, Արցախը դարձուցած է մնայուն

ուշադրութեան առարկայ: Արցախը իր կարեւոր տեղը ունեցած է միութեան դաստիարակչական ծրագիրներուն մէջ: Հ.Մ.Ը.Մ.ականներ հասակ առած են Արցախի սէրով, Արցախին ծառայելու եւ ի հարկին Արցախին համար զոհուելու պատրաստակամութեամբ: Ու չմոռնանք, որ Հ.Մ.Ը.Մ. իր նահատակները ունի Արցախեան պայքարին. Վարդան Բախշեանը, Վահէ Ռոստմեանը, Վիգէն Զաքարեանը եւ ուրիշներ իրենց արեամբ գրեցին Արցախի նորօրեայ մեր պատմութիւնը:

«Ու երբ միութիւն մը դաստիարակութեամբ, զոհաբերութեամբ Արցախի հետ կ'ըլլայ, բնական է, որ ան նաեւ Արցախի մէջը ըլլայ: Կազմակերպական ներկայութիւն եւ միութենական գործունէութիւն ունենայ: Բան մը, որ երկար տարիներ կարելի չէր իրագործել զանազան պատճառներով», յայտնեց եղբ. Մկրտիչեան:

Ապա, նորաստեղծ մասնաճիւղին առաքելութեան մասին խօսելով՝ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ., իր քայլերգին բառերով, մեր ժողովուրդին կամաւոր բանակն է: Բանակ մը, որ անհա, այսօր կու գայ իր բոլոր կարելիութիւնները ի սպաս դնելու Արցախի մեր պետականութեան եւ բանակին, իր շարքերուն մէջ հասակ առնող արի ու կայտառ երիտասարդութիւնը ուղղելով դէպի հայրենիքի ծառայութեան նուիրական դաշտ»:

Շարունակելով, եղբ. Գառնիկ Մկրտիչեան յայտնեց, որ այսօր բոլորին





հայեացքները ուղղուած են այստեղ, արցախցի իրենց քոյր-եղբայրներուն: Բոլորը յաջողութիւն կը ցանկան նորաստեղծ մասնաճիւղին եւ անխտիր բոլորը իրենց բովանդակ կարեւորութիւնները կը դնեն մասնաճիւղին տրամադրութեան տակ, որպէսզի ան ամրանայ, հզօրանայ, իրմով մեր ժողովուրդն ու պետականութիւնը ամրանան ու հզօրանան»:

Աւարտին, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, եղբ. Գառնիկ Մկրտիչեան շնորհակալութեան խօսք յայտնեց Արցախի պետական պատասխանատուներուն եւ յատկապէս նախագահ Բակօ Սահակեանին, որոնք անվարան զնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը ունենալու միութեան առաջարկը եւ կարելի ամէն աջակցութիւն ցուցաբերեցին:

Խօսքը եզրափակելով, Կեդրոնական Վարչութեան ատենապետը ընդունեց նորաստեղծ մասնաճիւղի սկստուններուն երդումը (եղբօր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 4-5):

**ԱՐՑԱԽԻ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԽՕՍՔԸ**

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի նորաստեղծ մասնաճիւղի ատենապետ եղբ. Վրէժ Էսմէրեան: Ան ըսաւ, որ Արցախի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի մը հիմնադրութեամբ կ'իրականանայ համայն հայութեան երազներէն մէկը: Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը «Բարձրացիր բարձրացուր» է, որուն համար մասնաճիւղին վարչութիւնը կարեւորութիւն կու տայ մեր երիտասարդութիւնը մարմնապէս պատրաստելու գործին, պահպանելով հայ մշակոյթը եւ պատ-

րաստելով հոգեպէս անասան, չլուսահատող քաղաքացիներ:

Եղբ. Էսմէրեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի քոյր կազմակերպութեան, որ պատուիրակութեամբ մը կը մասնակցի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական արարողութեան: Ան ըսաւ, որ ինչպէս Արցախի ազգային-ազատագրական պայքարի օրերուն ամբողջ հայրութիւնը թեւ ու թիկունք կանգնեցաւ Արցախին, այսօր եւս բոլորը հրաւիրուած են աջակցելու Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի մասնաճիւղին գոյատեւման ու զարգացման, իբրեւ երաշխիք հզօր եւ ամուր Արցախի մը կերտման:

**Հ.Յ.Դ. ԱՐՑԱԽԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ ԽՕՍՔԸ**

Պաշտօնական արարողութեան վերջին խօսքը արտասանեց Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան: Ան ըսաւ, որ մինչեւ օրս Հ.Մ.Ը.Մ. անպաշտօն ներկայութիւն էր Արցախի մէջ: Անոր վկայութիւնը նահատակուած Հ.Մ.Ը.Մ. ականներու անուններն են, որոնք հնչեցին քիչ առաջ:

Իշխանեան նկատել տուաւ, որ մասնաճիւղին հիմնադրութեան պաշտօնական արարողութիւնը տեղի կ'ունենայ խորհրդանշական հրապարակի մը մէջ, ուր 30 տարի առաջ սկիզբ առաւ ազգային-ազատագրական մեր պայքարը: Հրապարակ մը, ուրկէ տարիներ ետք մարտի մեկնեցան մեր քաջարի մարտիկները: Ան մաղթեց, որ հրապարակին







վրայ ծածանող դրոշներու ներկայութեամբ եւ բոլորին վկայութեամբ, նորաստեղծ մասնաճիւղին անդամները հաւատարիմ մնան Հ.Մ.Ը.Մ-ական իրենց խոստումին եւ եթէ հարկ ըլլայ պատրաստ ըլլան եւ ընդառաջեն հայրենիքի կանչին՝ ներկայ գտնուելու հայրենիքի պաշտպանութեան առաջին գիծին վրայ:

Պաշտօնական խօսքերու աւարտին, արարողութիւնը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտական շեփորախումբին ազգային-հայրենասիրական եղանակներով:

**ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԵՏ**

Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական արարողութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան եւ Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան այցելութիւն մը տուին նախագահ Բակօ Սահակեանին եւ շնորհակալութիւն յայտնեցին Հ.Մ.Ը.Մ-ին ցուցաբերած իր աջակցութեան համար:

Իր կարգին, նախագահ Սահակեան մեծապէս զնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի դերը երիտասարդութեան հայեցի դաստիարակութեան, ֆիզիքական եւ մտային կարողութիւններու զարգացման մէջ, նշելով որ ան մեծ ակնկալութիւններ ունի միութեան Արցախի գործունէութենէն:

**ԱՐՑԱԽԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԵՒ Հ.Յ.Դ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՒՆ ՄՕՏ**

Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւն մը, բաղկացած Կեդրոնական Վարչութեան անդամներէ եւ Արցախի մասնաճիւղին ատենապետէն, այնուհետեւ այցելեց Արցախի հայոց թեմի առաջնորդարան եւ տեսակցութիւն մը ունեցաւ Առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեանի հետ:

Առաջնորդը յայտնեց, որ զանազան շրջաններ այցելութիւններուն բերումով ինք ծանօթ է Հ.Մ.Ը.Մ-ի կառուցին եւ գործունէութեան: Հ.Մ.Ը.Մ. հայանրւէր եւ հայրենանուէր կազմակերպութիւն է, որ կը զբաղի նոր սերունդի դաստիարակութեան գործով, նշեց ան եւ յաջողութիւն մաղթեց Արցախի նորաստեղծ մասնաճիւղին աշխատանքներուն:

Այցելութիւններու շարքին վերջինը տրուեցաւ Հ.Յ.Դ. Ստեփանակերտի «Նիկոլ Դոման» կեդրոն, ուր Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնը տեսակցեցաւ Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչին եւ անդամներուն հետ: Տեսակցութեան ներկայ գտնուեցաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի Արցախի գործիչ Հրաչ Թադեւոսեան:

Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի գործունէութեան առնչուող կազմակերպական հարցեր եւ անմիջական գործակցութեան կարելիութիւններ:

**Թղթակից ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ**

Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական արարողութենէն անմիջապէս ետք, Հինգշաբթի, 22 Օգոստոս 2019-ի կէսօրին, Ասկերանի շրջանի Պատարա համայնքի տարածքին մէջ ընթացք առաւ սկառուտական առաջին բանակումը, որ երկարեցաւ հինգ օրուան վրայ:

Բանակումին իրենց մասնակցութիւնը բերին Արցախի նորաստեղծ մասնաճիւղին սկառուտները եւ բացման հանդիսութեան առիթով Ստեփանակերտ ժամանած Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ-ի խմբապետ քոյրեր եւ եղբայրներ:

Բանակումին երկրորդ օրը, Ուրբաթ, 23 Օգոստոսին, բանակավայր այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան:

Բանակումի աշխատանքներու աւարտին, Երեքշաբթի, 27 Օգոստոսին տեղի ունեցաւ փակման հանդիսաւոր արարողութիւն, որուն ներկայ գտնուեցան Հ.Յ.Դ. Արցախի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Դաւիթ Իշխանեան, Կեդրոնական Կոմիտէի ան-







## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՑԱԽԻ ՄԵԿՈՒՄԻ ՀՐՁԱՆԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

դամներ Արթուր Մոսիսյան, Սերգէյ Շահվերտեան եւ Վահագն Դադայեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Վրէժ Էսմէրեան, բանակումի մասնակիցներու ծնողներ եւ հարազատներ:

Այս առիթով արտասանած իր խօսքին մէջ Դաւիթ Իշխանեան ըսաւ, թէ բանակումը Պատարա գիւղին մէջ կատարելը պարզ գուգաղիպութիւն մը չէ, որովհետեւ հոն գտնուող Լեանոյ գիւղը ազատագրուած այն գիւղերէն է, որուն ազատագրութեան մասնակցած են

Սփիւռքէն եւ Հայաստանէն Հ.Մ.Ը.Մ.՝ականներ:

«Այս բանակումը բոլորին կողմէ նոյն ձեւով կը մեկնաբանուի՝ կազմակերպուած փոքր բանակ: Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի մեկուսի շրջանի առաջին բանակումով կը դրուի սկիզբ մը, որ ետզարձ չունի», շեշտեց Իշխանեան:

Իր կարգին, մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Վրէժ Էսմէրեան շնորհակալութիւնն յայտնեց բանակումի իրականացման օժանդակած անձերուն՝ նշելով, որ այս բանակումով գրուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի 111-րդ մասնաճիւղի պատմութեան առաջին էջերը:

Հ.Մ.Ը.Մ.Ի 111-րդ մասնաճիւղին աշխատանքները կազմակերպելու նպատակով Արցախ գործուղուած եղբ. Նարեկ Հաննէեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի մասնաճիւղի հիմնադրութեան կարեւորութեան: «Բանակումին մասնակից Արցա-



խի պատանիները արդարացուցին մեր սպասումներն ու յոյսերը: Ես վստահ եմ, որ քանի մը տարի ետք Արցախի մասնաճիւղը Հ.Մ.Ը.Մ.Ի ամէնէն հզօր մասնաճիւղերէն մէկը պիտի ըլլայ», շեշտեց ան:

Յայտնենք, որ փակման արարողութեան ընթացքին, բանակումին մասնակիցներուն յանձնուեցան հաստատագրներ:





ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ն.Մ.Ը.Մ.Ի ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

«ԴԷՊԻ ՅԱՂԹԱՆԱԿ...»

Ն.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵՏ ԵՐԹԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ  
100 ԱՏԵՂԱԿՈՒԹՅԱՆ 100 ԴԷՄՔ



Սեպտեմբեր 2019-ին, Պէյրուփ մէջ լոյս փնսա «Դէպի յաղթանակ...» խորագրեայ հասարակ, հրապարակութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեղրոնական Վարչութեան: Հասարակ նուիրում է միրութեան 100-ամեակին եւ կ'ընդգրկէ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեայ երթին նուիրում 100 սպեղազործութիւն, Հ.Մ.Ը.Մ.Ի 100 դէմքի կենսագրական ծանօթութիւն:

Ստորեւ հասարակ յառաջարանը, որ ընդհանուր գաղափար մը կու փայ հրապարակութեան պատրաստութեան եւ բովանդակութեան մասին:

# ՆԵՐՇՆՉՈՂ ՄԻՈՒԹԻՒՄ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մասին հրատարակութիւններ շատ կան: Մէկ դարու ընթացքին լոյս տեսած են մարմնակրթական այս մեծ միութեան սկստական թէ մարզական գործունէութիւնը ներկայացնող բազմաթիւ թերթեր ու գիրքեր: Ինչ որ կը պակսէր ցարդ, միութեան գեղարուեստական գրականութիւնը ծանօթացրնող հատորն էր, այն՝ որ պիտի համախմբէր մինչեւ օրս Հ.Մ.Ը.Մ.Ի մասին գրուած երգերն ու բանաստեղծութիւնները եւ զանոնք մէկ կողքի տակ պիտի հրամցնէր ընթերցողին:

Այս հատորը կը ծառայէ այդ նպատակին, ու ո՛չ միայն անոր, որովհետեւ ան միաժամանակ կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեայ երթը բնութագրող արժէքաւոր վկայութիւններ եւ հաստատումներ:

Արդարեւ, հատորին առաջին մասին մէջ տեղ գտած են Հ.Մ.Ը.Մ.Ի նուիրուած չափածոյ թէ արձակ ստեղծագործութիւններ, նշանաւոր մտաւորականներու, ազգային-հասարակական գործիչներու եւ Հայ Եկեղեցւոյ Վեհափառ Հայրապետներու պատգամներ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի համար ապրած ու գործած վաստակաշատ միութենականներու փորձառութիւնները խտացնող վկայութիւններ:

Պէտք է ընդունիլ, որ հայ թէ միջազգային իրականութեան մէջ, դժուար թէ գտնուի միութիւն մը, որ այնքան ներշնչումի աղբիւր եղած ըլլայ իր ժողովուրդին՝ որքան Հ.Մ.Ը.Մ.Ի: Մեր ժողովուրդը սիրած է Հ.Մ.Ը.Մ.Ի եւ ամբողջական վստահութեամբ փարած է անոր ազգային խոչնդներուն եւ միութեանական նպատակներուն: Ժողովուրդը Հ.Մ.Ը.Մ.Ի սիրած է նոյնիսկ իր պարտութեան մէջ, որովհետեւ իրեն համար Հ.Մ.Ը.Մ.Ի սոսկ սկստական կամ մարզական միութիւն մը եղած չէ, այլ՝ ազգային անկատար տենչերու իրականացման առաջնորդող շարժում մը, «Դէպի յաղթանակ...» ընթանալու կամբով, հաւատքով ու քայլերով:

Այսպէս, մարդիկ մարզական արդիւնքներէ եւ սկստական յաջողութիւններէ աւելի գնահատած են իրա՛ւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ականը, անոր մէջ տեսնելով Նոր Հայու՝ հպարտ, յաղթական եւ արժանապատիւ մարդու ստորոգելիները: Գիրի եւ խօսքի վարպետները Հ.Մ.Ը.Մ.Ի հմայքին ձօնած են իրենց լաւագոյն տողերը՝ դրուատելով երիտասարդական խանդավառութեան եւ ազգային ոգեւորութեան անսպառ աղբիւր մը ըլլալու անոր իւրայատկութիւնը: Գուրգէն Մահարի, Նիկոլ Աղբալեան, Շաւարշ Միսաքեան, Վահան Նաւասարդեան, եւ դեռ՝ Արամ Հայկազ, Անդրանիկ Մառուկեան, Մուշեղ Իշխան, Շահանդուխտ եւ ուրիշներ պերճախօս վկայները կը հանդիսանան այս հաստատումին:

Բոլորը ներշնչուած են Հ.Մ.Ը.Մ.Ի-էն եւ, փոխադարձութեան օրէնքով, իրենց կարգին նորահաս սերունդները ներշնչած են Հ.Մ.Ը.Մ.Ի դերն ու առաքելութիւնը գովերգող իրենց ստեղծագործութիւններով:

Դերը, սակայն կ'ունենայ դերակատար, իսկ առաքելութիւնը՝ առաքեալ: մարդ՝ որ կը լծուի աշխատանքի եւ իր կեանքով, վարքով ու բարքով կը նոյնանայ իր միութեան դերակատարութեան եւ առաքելութեան հետ, Հ.Մ.Ը.Մ.Ի պարագային՝ կը դառնայ ժողովուրդի ծառայ, նուիրեալ ու առաքեալ:

Հ.Մ.Ը.Մ.Ի մէկ դարու պատմութիւնը հարուստ է նման դէմքերով: Հազարաւորներ միութեան ճամբով ծառայած են իրենց պաշտելի ժողովուրդին: Հարիւրաւորներ արժանացած են գնահատականներու եւ շքանշաններու, իսկ տասնեակներ միայն հանրաճանաչ դարձած են հանրութեան: Հետեւաբար, այս հատորին երկրորդ բաժինը կը ներկայացնէ դէմքեր, ծանօթ թէ անծանօթ անուններ, որոնք սեփական քրտինքով, յաճախ նաեւ արեւմտեան գրած են 100-ամեայ այս միութեան պատուարներ պատմութիւնը: Ներշնչուած են Հ.Մ.Ը.Մ.Ի ազգային-գաղափարական արժէքներէն եւ մէկական կրողները եղած



են այդ արժեքներուն, իրենց կարգին ներշնչումի աղբւր, օրինակ եւ ուղեցոյց դառնալով իրենցմէ ետք եկող սերունդներուն:

Հատորը Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած ըլլալով, կը ներկայացնէ 100 ստեղծագործութիւն եւ 100 դէմք: Ստեղծագործութիւններու համախումբման եւ հատորով մը հրատարակութեան գաղափարը կը պատկանի Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ շրջանի երախտաշատ անդամներէն եղբ. Մանուկ Քէօշկէրեանին, որ նաեւ իր մասնակցութիւնը բերած է գրութիւններու հաւաքման աշխատանքին:

Դէմքերու կենսագրական տեղեկութիւնները պատրաստուած են Հ.Մ.Ը.Մ.ի «Մարգիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանի կողմէ եւ ներկայացուած են այբուբենական կարգով: Նկատի առնուած են կեանքին հրաժեշտ տուած միութենականներ, որոնք անուրանալի ներդրում ունեցած են համամիութենական թէ շրջանային մակարդակի

Մեր ժողովուրդը սիրած է Զ.Ս.Ը.Ս.ը եւ ամբողջական վստահութեամբ փարած է անոր ազգային իտեալներուն եւ միութենական նպատակներուն: Ժողովուրդը Զ.Ս.Ը.Ս.ը սիրած է նոյնի՛սկ իր պարտութեան մէջ, որովհետեւ իրեն համար Զ.Ս.Ը.Ս.ը սոսկ սկաուտական կամ մարզական միութիւն մը եղած չէ, այլ՝ ազգային անկատար տենչերու իրականացման առաջնորդող շարժում մը, «Դէպի յաղթանակ...» ընթանալու կամքով, հաւատքով ու քայլերգով:

յաջողութիւններու կերտման: Կենսագրականները յաւակնութիւնը չունին ամբողջական եւ անթերի ըլլալու: Անոնք պատրաստուած են մամուլին տրամադրելի աղբւրներու հիմամբ եւ ամփոփ գիծերով ներկայացուելու մտադրութեամբ: Այլապէս, իւրաքանչիւր դէմքի մասին կարելի էր շատ աւելի լայն տեղեկութիւններ փոխանցել:

Հատորը լոյս կը տեսնէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, իբրեւ միութեան 100-ամեակին նուիրուած հրատարակութիւն: Առ այդ, ան յարգանքի տուրք կ'ընծայէ բոլոր անոնց, որոնք իրենց կեանքով, ստեղծագործութեամբ թէ վկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ երթին ընկերացան եւ զայն «Դէպի յաղթանակ...» առաջնորդելու հաւաքական, միասնական ու նուիրական ճիգին մասնակից դարձան:



PinkKimberley.com.au

*Diamonds beyond rare*



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.





*Համահայկական 7-րդ մարզախաղերուն՝*

● *Գլխավոր ջանք բոցավառեցաւ երեք ջահէ: Սփիւռք-Հայաստան-Արցախ եռամիասնութիւնը խորհրդանշող առաջին ջահը, 14 Յունիս 2019-ին, վառեցաւ պատմական կիլիկիոյ Մուսա լեւրան ՎազրՖ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Թաթուլ Ծ. Վրդ. Անուշեանի օրհնութեամբ:*

*Երեք օր ետք, 17 Յունիսին, երկրորդ ջահը վառեցաւ Խոր Վիրապի Ս. Գրիգոր Լուսաւորիչի կանթեղէն եւ ներկայացուց Հայաստանի ջահը, մինչ երրորդ ջահը, Արցախը խորհրդանշող, 25 Յունիսին վառեցաւ Արցախի պատմական Տիգրանակերտ քաղաքին շրջափակը:*

*Մուսա լեւրան ջահը վառեց համահայկական խաղերու հիմնադիրներէն, ամե-*



# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱՄՈՒՐԶ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՅԱԽ-ՍՓԻՒՌ ԵՌԱՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ



**- ԵՐԵՔ ԶԱՀԵՐԸ ԿԸ ՎԱՌԻՆ ՄՈՒՍԱ ԼԵՌԷՆ, ԽՈՐ ՎԻՐԱՊԷՆ  
ԵՒ ԱՐՅԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԷՆ  
- ԲԱՅՈՒՄԸ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ  
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՉ, ՓԱԿՈՒՄԸ՝ ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ**

րիկահայ բարերար Այսյերթ Աճէմեան: Զահր Մուսա լերան ստորոտէն հերոսամարտին վայրը՝ լերան գագաթը բարձրացուց Համահայկական խաղերու Համաշխարհային Կոմիտէի փոխ նախագահ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան:

Մուսա լեռէն Զահր բերուեցաւ հայոց պատմական մայրաքաղաք Անի, ուրկէ փոխադրուեցաւ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտ: Ճամբուն ընթացքին, Մուշ-Անի ուղեւորութեան փամանակ, պատուիրակութեան անդամները այցե-

լեցին Գէորգ Զաւուշի շիրիմը եւ համահայկական Զահր խոնարհեցուցին ազգային մեծ հերոսին շիրիմին դիմաց: Ապա, անոնք այցելեցին Վանի, Մուշի, Իգտիրի եւ Կարսի քաղաքապետներուն՝ զանոնք հրաւիրելով 7-րդ մարզախաղերուն:


Խոր Վիրապի Զահր վառեց ողիմպիական խաղերու ախոյեան Արթիւր Ալեքսանեան: Իսկ Տիգրանակերտի Զահր, Արցախի նախագահ Բակո Սահակեանի ներկայութեամբ, վառեց 2016-ի Ապրիլեան պատերազմի մասնակից, «Մարտական խաչ»ի ասպետ, Արցախի պաշտպա-

նութեան բանակի աւագ սպայ Արթիւր Աղասեան:

●Պաշտօնական բացումը կատարուեցաւ 5 Օգոստոսին, Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի «Ստեփան Շահումեանի անուան» հանրապետական մարզադաշտին մէջ: Բացման հանդիսութեան գլխաւոր բեմադրիչն էր Ռուբէն Յովհաննիսեան, իսկ բեմականացման պատասխանատուն՝ Հրաչ Քէշիշեան:

Հանդիսութեան ներկայացուցեցաւ հինգ պատկեր: Կատարուեցաւ Լէյզըրով եռաչափ (3D) ցուցադրութիւն, հանդի-





սաւոր տողանցք եւ հրավառութիւն: Գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին Արցախէն, Հայաստանէն եւ Սփիւռքէն արուեստագէտներ:

Փակումը տեղի ունեցաւ 17 Օգոստոսին, Երեւանի «Ազատութեան» հրապարակին վրայ, պետական, մարզական եւ ժողովրդային հոծ ներկայութեամբ: Հանդիսութեան ընթացքին, ՀամաՀայկական խաղերու Համաշխարհային կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեան փոխ վարչապետ Տիգրան Աւինեանը պարգեւատրեց կոմիտէի պատուոյ շքանշանով: Իր կարգին, կոմիտէի անդամ Ալլէրթ Պոյաճեան կոմիտէի անունով Իշխան Զաքարեանին շնորհեց պատուոյ շքանշան:

● Մասնակցեցան 35 երկիրներու 161 քաղաքներէ 5244 մարզիկներ ու մարզիչներ: Խաղերուն հետեւելու համար Սփիւռքէն Հայաստան-Արցախ ժամանեցին 10 հազար սփիւռքահայեր:

Արտասահմանեան մեծագոյն պատուիրակութիւնը Ռուսիոյ պատուիրակութիւնն էր՝ 13 քաղաքէ 389 մարզիկ-մարզիկուհի: Թիւով երկրորդ եւ երրորդ մեծ պատուիրակութիւնները եղան Մ. Նահանգներու (11 քաղաքէ 318 մարզիկ-մարզիկուհի) եւ Ֆրանսայի պատուիրակութիւնները (6 քաղաքէ 178 մարզիկ-մարզիկուհի):

● Կիրարկուեցան 17 մարզախաղեր. Աթլէթ, պատմութիւն, բազկամարտ, պասքեթպոլ, կոլֆ, թենիս, լող, լուսնային զինեայ վոլբոլ, վոլբոլ, հէնտպոլ, հեծելարշաւ, հրաձգութիւն, մարզական պարեր, փինկ-փոնկ, Փուլպոլ, Փուլթսալ եւ ճատրակ:

Մարզախաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, մրցումներուն խումբեր մասնակցեցան Արաբական Միացեալ Էմիրութիւններէն, Իրաքէն եւ Չեխիայէն:

● Զոյգ կազմկոմիտէներ ստեղծուեցան Հայաստանի եւ Արցախի մէջ, խաղերու բարեյաջող կազմակերպման համար: Արցախի կազմկոմիտէն գլխաւորեց պետնախարար (վարչապետ) Գրիգորի Մարտիրոսեան, Հայաստանի կազմկոմիտէն՝ փոխ վարչապետ Տիգրան Աւինեան:

● Աւելի քան 400 կամաւորներ մասնակցեցան 12 օր երկարած մարզախաղերու կազմակերպական աշխատանքներուն եւ յատկապէս՝ բացման հանդիսաւոր արարողութեան, Արցախի մէջ:

● Մարզախաղերու գեղուհի հռչակեցաւ ուսասհայ, վոլբոլի մարզիկուհի Աննա Թունեան:

● Մրցանակներ ստացան հետեւեալ խումբերը. «Արդար խաղ»ի մրցանակ՝ Հալէպի պասքեթպոլի աղջկանց խումբ, «Հաւազոյն մարզական պատուիրակութեան» մրցանակ՝ Ռուսիոյ պատուիրակութիւն (խաղերուն 13 քաղաքներու 389 մարզիկ-մարզիկուհիներով մասնակցած), «Մարզախաղերու յայտնութիւնը եղող պատուիրակութեան» մրցանակ:



Չահի բոցավառում Սուսա լերան Կաթըֆ գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ





## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԳ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՐԳԻՒՆՔՆԵՐ

|                   | ՈՍԿԻ | ԱՐԾԱԹ | ՊՐՈՆՉ |
|-------------------|------|-------|-------|
| 1. Երեւան         | 59   | 45    | 39    |
| 2. Կիւմրի         | 18   | 15    | 13    |
| 3. Էջմիածին       | 9    | 7     | 6     |
| 4. Վանաձոր        | 9    | 5     | 8     |
| 5. Ստեփանակերտ    | 8    | 12    | 15    |
| 6. Թիֆլիս         | 5    | 1     | -     |
| 7. Արմավիր        | 3    | 3     | 1     |
| 8. Կլեմտէյլ       | 2    | 4     | 6     |
| 9. Կապան          | 2    | 4     | 2     |
| 10. Արովեան       | 2    | 4     | -     |
| 11. Մարտունի      | 2    | 3     | 1     |
| 12. Աշտարակ       | 2    | 1     | -     |
| 13. Անթիլիաս      | 1    | 1     | 1     |
| 14. Տոնի Ռոստով   | 1    | 1     | -     |
| 15. Վարդենիս      | 1    | 1     | -     |
| 16. Սոֆիա         | 1    | 1     | -     |
| 17. Սպահան        | 1    | -     | 4     |
| 18. Մոսկուա       | 1    | -     | 2     |
| 19. Տաշիր         | 1    | -     | 1     |
| 20. Տազանրոզ      | 1    | -     | 1     |
| 21. Մոնթրէալ      | -    | 3     | -     |
| 22. Թեհրան        | -    | 2     | 7     |
| 23. Նիկոսիա       | -    | 2     | 4     |
| 24. Արտաշատ       | -    | 2     | 1     |
| 25. Ստեփանաւան    | -    | 2     | 1     |
| 26. Քիւել         | -    | 1     | 2     |
| 27. Եղեգնաձոր     | -    | 1     | 1     |
| 28. Գորիս         | -    | 1     | 1     |
| 29. Սիտնի         | -    | 1     | 1     |
| 30. Շուշի         | -    | 1     | 1     |
| 31. Զամպուրկ      | -    | 1     | -     |
| 32. Մսիսթի        | -    | 1     | -     |
| 33. Պառնաուլ      | -    | 1     | -     |
| 34. Եկատերինպուրկ | -    | 1     | -     |
| 35. Պելլորլի Զիլզ | -    | 1     | -     |
| 36. Թել Աիւ       | -    | -     | 2     |
| 37. Պէյրուսթ      | -    | -     | 2     |
| 38. Քէօլն         | -    | -     | 1     |
| 39. Մասիս         | -    | -     | 1     |
| 40. Պարսելոնա     | -    | -     | 1     |
| 41. Ալավերտի      | -    | -     | 1     |
| 42. Պուրճ Զամուտ  | -    | -     | 1     |
| 43. Զալէպ         | -    | -     | 1     |

ցանակ՝ Տոկայի պատուիրակութիւն, «Կարգապահութեան եւ մարզական ոգիի» մրցանակ՝ Վիեննայի խումբ, «Լաւագոյն քաղաքի պատուիրակութեան» մրցանակ՝ Էջմիածինի եւ Սիսնիի պատուիրակութիւններ:

● Ընդհանուր դասաւորման առաջին երեք դիրքերը գրաւեցին հայրենի երեք պատուիրակութիւններ՝ Երեւան՝ 141 մետալ (59 ոսկի, 43 արծաթ, 39 պրոնզ), Կիւմրի՝ 46 մետալ (18 ոսկի, 15 արծաթ, 13 պրոնզ) եւ Էջմիածին՝ 22 մետալ (9 ոսկի, 7 արծաթ, 6 պրոնզ):

Խաղերու մասնակից 161 քաղաքներէն մետալներու տիրացան 43 քաղաքներ, որոնցմէ 17-ը՝ Հայաստանէն, երկուքը՝ Արցախէն, 4-ը՝ Ռուսիայէն, երեքը՝ Վրաստանէն, իսկ մնացեալ 17-ը՝ Սփիւռքի զանազան քաղաքներէն: Սփիւռքի քաղաքներէն լաւագոյն արդիւնքը արձանագրեցին Միացեալ Նահանգներու Կլեմտէյլ քաղաքի խումբերը՝ ապահովելով 12 մետալ (2 ոսկի, 4 արծաթ, 6 պրոնզ) եւ գրաւելով ընդհանուր դասաւորման 8-րդ դիրքը:

● Առաջին անգամ ըլլալով, բացման հանդիսութիւնը եւ առաջին երկու օրուան մրցումները տեղի ունեցան Արցախի մէջ:

6 եւ 7 Օգոստոսին, Արցախ ֆուտպոլի մրցումներ հիւրընկալեց Ասկերանի, Մարտակերտի, Մարտունիի մարզադաշտերուն վրայ, ճատրակի մրցումներ՝ Ստեփականերտի երրորդ դպրոցի սրահին մէջ, հեծելաքաշակի





մրցումներ՝ Ստեփանակերտ-Տիգրանակերտ երթ ու դարձի ճամբուն վրայ (60 քմ.), վոլիպոլի մրցումներ՝ Ստեփանակերտի թիւ 6 դպրոցին մէջ:

Արցախի մէջ տեղի ունեցան նաեւ բազկամարտի եւ մարզական պարերու մրցումներ:

● Բացման ու փակման հանդիսութիւններուն ներկայ գտնուեցաւ եւ ողջոյնի խօսքեր արտասանեց Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան: Բացման հանդիսութեանէն առաջ, Փաշինեան հանդիպում մըն ալ ունեցաւ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի անդամներուն հետ:

● Նշուեցաւ մարզախաղերու ստեղծման 20-ամեակը: Համահայկական

առաջին երեք մարզախաղերը կազմակերպուած են երկու տարին անգամ մը, ապա անոնք տեղի ունեցած են չորս տարին անգամ մը՝ մարզախաղերու եւ մասնակիցներու հետեւեալ պատկերով.

- Առաջին մարզախաղեր, 28 Օգոստոսէն 5 Սեպտեմբեր 1999, 7 մարզախաղ, 1141 մասնակից 23 երկիրներու 63 քաղաքներէ:

- Երկրորդ մարզախաղեր, 18-26 Օգոստոս 2001, 9 մարզախաղ, 1419 մասնակից 27 երկիրներու 82 քաղաքներէ:

- Երրորդ մարզախաղեր, 16-24 Օգոստոս 2003, 10 մարզախաղ, 1559 մասնակից 28 երկիրներու 82 քաղաքներէ:

- Չորրորդ մարզախաղեր, 18-26 Օգոստոս 2007, 10 մարզախաղ, 1576

մասնակից 28 երկիրներու 94 քաղաքներէ:

- Հինգերորդ մարզախաղեր, 13-21 Օգոստոս 2015, 10 մարզախաղ, 3244 մասնակից 33 երկիրներու 125 քաղաքներէ:

- Վեցերորդ մարզախաղեր, 2-13 Օգոստոս 2015, 17 մարզախաղ, 6352 մասնակից 35 երկիրներու 175 քաղաքներէ:

2014-ին ընթացք առած են նաեւ համահայկական ձմեռնային մարզախաղերը, որոնք տեղի ունեցած են 24 Փետրուարէն 2 Մարտ 2014, Երեւանի եւ Մադրիդի մէջ, մասնակցութեամբ 11 երկիրներու 22 քաղաքներէ ժամանած 400 մարզիկ-մարզիկուհիներու, որոնք մրցած են 4 մարզաձեւերու մէջ:

20-ամեակի առիթով, Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէն, մարզախաղերու աւարտին, յատուկ յուշամետալներով պատուեց խաղերու գործադիր կոմիտէի անդամները:

● Ինչպէս նախորդ մարզախաղերուն, գործեցին պաշտօնական կայքէջ (panarmeniangames.am) եւ դիմատետրի էջեր՝ (Pan Armenian Games, Pan-Armenian Games) ներկայացնելու համար մարզախաղերուն ընթացքը, միջնորդան ու արդիւնքները: Ընթացքն ու միջնորդար նկարներով եւ տեսանիւթերով ներկայացուեցան կանոնաւոր կերպով: Նոյնը կարելի չէ ըսել արդիւնքներու պարագային, որոնք թերի եւ անկատար կը մնան մինչեւ օրս: Այդ պատճառով ալ, կողքի էջերով ներկայացուած արդիւնքներէն, հասկնալիօրէն, կը բացակային Փուլթպոլի, Փուլթսալի, փինկ-





փոնկի, հեծելարչաւի, վոլիպոլի եւ բազկամարտի մրցումներուն ամբողջական արդիւնքներն ու ընդհանուր դասաւորումները:

ՀամաՀայկական 7-րդ մարզախաղերուն ընկերացան հետեւեալ իրադարձութիւնները:-

●Մարզախաղերու երկրորդ օրը, 7 Օգոստոսին, Արցախի նախագահ Բակո Սահակեան ընդունեց ՀամաՀայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի անդամները, գլխաւորութեամբ Կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեանի:

Նախագահ Բակո Սահակեան խաղերուն Արցախի մէջ իրագործումը նկատեց հանրապետութեան կեանքին մէջ նշանակալի իրադարձութիւն եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Կոմիտէին կատարած քրտնաջան աշխատանքին համար:

Նոյն օրը, Ստեփանակերտի օդակայանին մէջ կազմակերպուեցաւ տօնական ձեռնարկ՝ խաղերու յաջող մեկնարկին եւ ընթացքին համար:

●Օր մը ետք, Ստեփանակերտի մէջ տեղի ունեցաւ ՀամաՀայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի ընդհանուր ժողովը, որ քննարկեց հինգ կէտեր՝ եօթներորդ մարզախաղերու կազմակերպման ընթացք, կոմիտէի նոր կազմի ընտրութիւն, ձեռնարկին երկրորդ մարզախաղերու կազմակերպում, կանոնադրային փոփոխութիւններ եւ կազմակերպչական հարցեր:

Միաձայնութեամբ կոմիտէի նախագահ վերընտրուեցաւ Իշխան Զաքարեան:



Փոխ նախագահներ վերընտրուեցան Ալյալիթ Պոյաճեան եւ եղբայրներ Ստեփան Տէր Պետրոսեան եւ Ռոյանտ Շառոյեան: ՀամաՀայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէին կազմը համալրուեցաւ երեք նոր անդամով՝ Հայաստանի ֆուլթպոլի ֆետերասիոնի նախագահ Արթիւր Վանեցեան, գոլիցերիասայ բարերար Վարդան Սրմաքէշ եւ ամերիկահայ Շահան Սեմէրճեան:

●Մարզախաղերուն իններորդ օրը, 13 Օգոստոսի առաւօտեան ժամը 10-ին, խաղերու մասնակից պատուիրակութիւնները այցելեցին Մեծ Եղեռնի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ իրենց յարգանքի տուրքը ընծայեցին Հայոց Յեղասպանութեան զոհերուն:


Պատուիրակութիւնները նախ ծաղիկներ գետեղեցին յուշահամալիրին, ապա այցելեցին Յեղասպանութեան թանգարան:

Յետմիջօրէին, պատուիրակութիւնները մեկնեցան Գառնի ու Գեղարզ, ծանօթացան հայ հոգեւոր մշակոյթի պատմական զոյգ յուշակոթողներուն եւ միասնաբար անցուցին խանդավառ պահեր:

●Մարզախաղերու փակումէն ետք, կարգ մը պատուիրակութիւններու ներկայացուցիչներ այցելեցին «Օրրան» բարեսիրական կազմակերպութեան գրասենեակ եւ նուէրներով ու զրեւական պիտոյքներով ուրախացուցին «Օրրան»ի հոգածութիւնը վայելող, ընկերային անապահով երեխաները:







# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱՐԴԻԲՆՔՆԵՐ

## ՊԱՍՔԵԹՊՈՒ

### ՏՂԱՔ

1. Կլենտէյլ
2. Պեւրրի Կիրզ

### ԱՂՋԻԿՆԵՐ

1. Կլենտէյլ
2. Թեհրան
3. Սպահան

## ԿՈՒՑ

### ՏՂԱՔ

1. Արմէն Մովսիսեան (Մոսկուա)
2. Ճիմ Լիվէ (Կիպրոս)
3. Համազ Ղազարեան (Վիեննա)

### ԱՂՋԻԿՆԵՐ

1. Արաքս Զարգարեան (Երեւան)
2. Էլիզապէթա Առուստամեան (Ռոստով)
3. Նուշիկ Գէորգեան (Երեւան)

## ՊԱՏՄԻՆԹԸՆ

### ՏՂԱՔ

1. Սարգիս Յակոբեան (Սոֆիա)
2. Զաւէն Մնացականեան (Երեւան)
3. Արսէն Խաչատրեան (Երեւան)

### ԱՂՋԻԿՆԵՐ

1. Մարիէթա Նիկոյեան (Երեւան)
2. Ալվարո Գոլսէֆեան (Համպուրկ)
3. Գայիանէ Մամաջանեան (Երեւան)

### ԶՈՅԳ ՏՂԱՔ

1. Արսէն Խաչատրեան (Երեւան), Ռոպէրթ Գասպարեան (Երեւան)
2. Սարգիս Յակոբեան (Սոֆիա), Արման Վարդանեան (Երեւան)
3. Զաւէն Մնացականեան (Երեւան), Էտկար Նազարէթեան (Երեւան)

### ԶՈՅԳ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Մանէ Ստեփանեան (Երեւան), Մարիա Խաչատրեան (Թիֆլիս)
2. Աննա Նազարեան (Երեւան), Ռուզաննա Յակոբեան (Քիւել)
3. Գայիանէ Մամաջանեան (Երեւան), Սվետլանա Պոյաճեան (Երեւան)

## ՃԱՏՐԱԿ

### ՏՂԱՔ

1. Ալեքս Մանուկեան (Ստեփանակերտ)
2. Խաչատուր Մեսրոպեան (Արմավիր)
3. Սուրէն Պողոսեան (Երեւան)

### ԱՂՋԻԿՆԵՐ

1. Սոնա Ասատրեան (Աշտարակ)
2. Նարէ Առաքելեան (Երեւան)
3. Մանէ Աղամեան (Ստեփանակերտ)

## ԹԵՆԻՍ

### ՏՂԱՔ

1. Աշոտ Գէորգեան (Կիւմրի)
2. Արման Դանիլչեան (Երեւան)
3. Միրո Սարգիսեան (Երեւան)

### ԱՂՋԻԿՆԵՐ

1. Գարրիէլյա Ակոբեան (Հայաստան)
2. Իրենա Մուրատեան (Հայաստան)
3. Միլենա Գէորգեան (Հայաստան)

### ԶՈՅԳ ՏՂԱՔ

1. Աշոտ Գէորգեան/Արտաշ Գէորգեան (Կիւմրի/Աշտարակ)
2. Խաչատուր Խաչատրեան/Սամուէլ Քոթանճեան (Երեւան)
3. Քարլ Պէրպէրեան/Հայկ Դաւիթեան (Պէյրուիթ/Հալէպ)

### ԶՈՅԳ ԱՂՋԻԿՆԵՐ

1. Գարրիէլյա Ակոբեան/Միլենա Գէորգեան (Երեւան/Էջմիածին)
2. Աննահիտ Յակոբկողեան/Իչենա Մուրատեան (Երեւան)





3. Քնքոյն Եղիգարեան/Սիւզի Մուրատեան (Երեւան)

### ԼՈՂԱՓՆԵԱՅ ՎՈՒԳՈՒԼ

#### ՏՂԱՔ

1. Թիֆլիս 2
2. Մցխէթի
3. Երեւան 1

#### ԱՂՋԻԿՆԵՐ

1. Երեւան
2. Աշտարակ
3. Երեւան 2

### ՀՐԱՉԳՈՒԹԻՒՆ

#### ՏՂԱՔ, ՕԴԱՄՂԻՉ ԱՏՐՃԱՆԱԿ 40 ԿՐԱԿՈՑ

1. Նորայր Առաքելեան (Երեւան)
2. Սեւակ Արշակեան (Երեւան)
3. Արամ Խլղաթեան (Կիւմրի)

#### ԱՂՋԻԿՆԵՐ, ՕԴԱՄՂԻՉ ԱՏՐՃԱՆԱԿ 40 ԿՐԱԿՈՑ

1. Էլմիրա Կարապետեան (Երեւան)
2. Նարէ Գաբրիէլեան (Երեւան)
3. Մանան Ասլիկեան (Երեւան)

#### ՏՂԱՔ, ՕԴԱՄՂԻՉ ԱՏՐՃԱՆԱԿ 10 Մ., 40 ԿՐԱԿՈՑ

1. Վրէժ Թորոսեան (Երեւան)
2. Սուրէն Բերեան (Երեւան)
3. Հայկ Բաբայեան (Երեւան)

#### ԱՂՋԻԿՆԵՐ, ՕԴԱՄՂԻՉ ԱՏՐՃԱՆԱԿ 10 Մ., 40 ԿՐԱԿՈՑ

1. Ալլա Պօղոսեան (Երեւան)
2. Մարիամ Միքայէլեան (Երեւան)
3. Միլենա Պօղոսեան (Երեւան)

### ԼՈՂ / ՏՂԱՔ

#### 50 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ

1. Արթուր Բարսեղեան (Երեւան) 0'22"98
2. Վահան Մխիթարեան (Երեւան) 0'23"66
3. Սամուէլ Սահակեան (Քիւեւ) 0'28"04

#### 100 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ

1. Լեւոն Խաչատրեան (Երեւան) 1'00"73
2. Արամ Կոստանեան (Ստեփանակերտ) 1'01"45
3. Նիկոլաս Յարութիւնեան (Կլենտէյլ) 1'04"64

#### 100 ՄԵԹՐ ԹԻԹԵՌՆԻԿ

1. Ռուբէն Ղարիպեան (Երեւան) 1'01"58
2. Տարօն Աբիգաս (Սիւնի) 1'02"19
3. Սերգէյ Նազարեան (Երեւան) 1'02"19

#### 4x50 Մ. ԱԶԱՏ ՈՃ

1. Երեւան 1'35"07 (Հ.Հ. մրցանիշ)
2. Կիւմրի 1'47"23
3. Կլենտէյլ 1'49"43

#### 100 Մ. ԱԶԱՏ ՈՃ

1. Արթուր Բարսեղեան (Երեւան) 0'50"59
2. Վահան Մխիթարեան (Երեւան) 0'53"28
3. Տարօն Աբիգաս (Սիւնի) 0'56"28

#### 200 Մ. ԽԱՌՆ

1. Լեւոն Խաչատրեան (Երեւան) 2'11"61 (Հ.Հ. մրցանիշ)
2. Նիկոլաս Յարութիւնեան (Կլենտէյլ) 2'22"25
3. Էդուարդ Ճաղարեան (Երեւան) 2'25"59

#### 50 Մ. ՊՐԱՍ

1. Կարէն Երանոսեան (Կիւմրի) 0'31"06
2. Միխայիլ Շահնազարով (Երեւան) 0'31"12
3. Հրաչեայ Շահինեան (Թեյ Աւիւ) 0'33"39

#### 4x100 Մ. ԱԶԱՏ ՈՃ

1. Երեւան 3'31"37 (Հ.Հ. մրցանիշ)
2. Կիւմրի 4'03"86
3. Կլենտէյլ 4'06"42

#### 50 Մ. ԹԻԹԵՌՆԻԿ

1. Արթուր Բարսեղեան (Երեւան) 0'24"41 (Հ.Հ. մրցանիշ)
2. Վահան Մխիթարեան (Երեւան) 0'26"85
3. Սամուէլ Սահակեան (Քիւեւ) 0'27"93





**50 Մ. ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ**

1. Արամ Կոստանեան (Ստեփանակերտ) 0'28"19
2. Նիկոլաս Յարուլթիլեան (Կլենտէյլ) 0'29"85
3. Գէորգ Մախառտեան (Երեւան) 0'30"34

**100 Մ. ՊՐԱՍ**

1. Կարէն Երանոսեան (Կիւմրի) 1'06"82
2. Միխայիլ Շահնազարով (Երեւան) 1'08"82
3. Հրաչեայ Շահինեան (Թել Աւիլ) 1'15"09

**4x100 Մ. ԱԶԱՏ ՈՃ**

1. Երեւան 4'03"70 (Հ.Հ. մրցանիշ)
2. Կիւմրի 4'37"72
3. Կլենտէյլ 4'42"59

**ԼՈՂ / ԱՂԶԻԿՆԵՐ**

**50 ՄԵԹՐ ԱԶԱՏ ՈՃ**

1. Վարսենիկ Մանուչարեան (Երեւան) 0'26"57
2. Անի Պօղոսեան (Երեւան) 0'26"76
3. Մարի Ճորճիա (Նիկոսիա) 0'28"04

**100 ՄԵԹՐ ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ**

1. Նինա Կիրակոսեան (Երեւան) 1'06"09
2. Էլյա Եագտրճեան (Մոնթրէյլ) 1'12"07
3. Սիւզաննա Գրիգորեան (Երեւան) 1'18"08

**100 ՄԵԹՐ ԹԻԹԵՆՆԻԿ**

1. Նինա Կիրակոսեան (Երեւան) 1'04"19 (Հ.Հ. մրցանիշ)
2. Մարի Ճորճիա (Նիկոսիա) 1'09"04
3. Եւա Կարապետեան (Երեւան) 1'11"60

**4x50 Մ. ԱԶԱՏ ՈՃ**

1. Երեւան 1'51"29 (Հ.Հ. մրցանիշ)
2. Կիւմրի 2'14"06
3. Թեհրան 2'17"36

**100 Մ. ԱԶԱՏ ՈՃ**

1. Անի Պօղոսեան (Երեւան) 0'58"09
2. Վարսենիկ Մանուչարեան (Երեւան) 0'59"06
3. Մարի Ճորճիու (Նիկոսիա) 1'01"74

**200 Մ. ԽԱՌՆ**

1. Նինա Կիրակոսեան (Երեւան) 2'23"85 (Հ.Հ. մրցանիշ)
2. Էլյա Եագտրճեան (Մոնթրէյլ) 2'36"36
3. Մարի Ճորճիու (Նիկոսիա) 2'41"90

**50 Մ. ՊՐԱՍ**

1. Վարսենիկ Մանուչարեան (Երեւան) 0'33"94
2. Էլյն Եսայեան (Երեւան) 0'37"00
3. Շարլոտ Երիմեան (Պարսելոնա) 0'37"41

**4x100 Մ. ԱԶԱՏ ՈՃ**

1. Երեւան 4'03"40 (Հ.Հ. մրցանիշ)
2. Կիւմրի 4'54"10
3. Թեհրան 5'14"64

**50 Մ. ԹԻԹԵՆՆԻԿ**

1. Վարսենիկ Մանուչարեան (Երեւան) 0'29"20
2. Նինա Կիրակոսեան (Երեւան) 0'29"20
3. Մարի Ճորճիու (Նիկոսիա) 0'30"34

**50 Մ. ԿՈՆԱԿԻ ՎՐԱՅ**

1. Նինա Կիրակոսեան (Երեւան) 0'30"38 (Հ.Հ. մրցանիշ)
2. Էլյա Եագտրճեան (Մոնթրէյլ) 0'32"53
3. Սիւզաննա Գրիգորեան (Երեւան) 0'33"42

**100 Մ. ՊՐԱՍ**

1. Վարսենիկ Մանուչարեան (Երեւան) 1'18"26 (Հ.Հ. մրցանիշ)
2. Էլյն Եսայեան (Երեւան) 1'20"19
3. Քրիստինէ Յովհաննիսեան (Կիւմրի) 1'21"56

**4x100 Մ. ԱԶԱՏ ՈՃ**

1. Երեւան 4'37"18 (Հ.Հ. մրցանիշ)
2. Կիւմրի 5'22"62
3. Թեհրան 5'58"69

**ՀԷՏՊՈՒԼ**

1. Վանաձոր 10 կէտ
2. Երեւան 8 կէտ
3. Ալյավերտի 6 կէտ

**ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՐԵՐ**

1. Երեւան 12 ոսկի, 10 արծաթ, 9 պրոնզ





- 2. Էջմիածին 8 ոսկի, 7 արծաթ, 5 պրոնզ
- 3. Կիևրի 6 ոսկի, 4 արծաթ, 2 պրոնզ

**ԱԹԼԵԹԻՉՄ/ՏՂԱՔ**

**200 Մ. ՎԱՁՔ**

- 1. Ռազմիկ Մկրտչեան (Երեւան) 21"9
- 2. Ռաֆիկ Օհանեան (Երեւան) 22"5
- 3. Տիգրան Մկրտչեան (Կիևրի) 22"6

**800 Մ. ՎԱՁՔ**

- 1. Երուանդ Մկրտչեան (Կիևրի) 1"53"6
- 2. Ռոման Ալեքսանեան (Արտաշատ) 1"55"1
- 3. Արման Յակոբեան (Ստեփանակերտ) 1"57"0

**ՄԷԿ ՔԱՅԼ ՈՍՏՈՒՄ**

- 1. Արաակ Համբարձումեան (Երեւան) 7.85 մ.
- 2. Գոռ Բեգզարեան (Կապան) 7.39 մ.
- 3. Սերժ Արթուր (Պուրճ Համուտ) 7.35 մ.

**ՍԿԱՒԱՌԱԿ ԱՐՁԱԿԵԼ**

- 1. Մանուկ Մանուկեան (Կիևրի) 55 մ.
- 2. Ալպերիժ Մարտիրոսեան (Ստեփանակերտ) 47.55 մ.
- 3. Տարօն Բաղդումեան (Սպահան) 44.97 մ.

**4x100 Մ. ԴՐՕՇԱՐՇԱԻ**

- 1. Կապան 43"6
- 2. Արտաշատ 44"2
- 3. Վանաձոր 47"2

**ԱԹԼԵԹԻՉՄ/ԱՂՋԻԿՆԵՐ**

**200 Մ. ՎԱՁՔ**

- 1. Գայրանէ Չիլոյեան (Երեւան) 24"9
- 2. Մարիանա Բաղեան (Վանաձոր) 25"0
- 3. Վահան Շիրվանեան (Սպահան) 6"0

**800 Մ. ՎԱՁՔ**

- 1. Էլլադա Ալլապերտեան (Վանաձոր) 2'15"8
- 2. Անդելինա Աւաղեան (Ստեփանակերտ) 2'19"0
- 3. Ռայիսա Սիմոնեան (Վանաձոր) 2'37"2

**ԳՈՒՆՏ ՆԵՏԵԼ**

- 1. Ժաննա Շահնազարեան (Վանաձոր) 10.92 մ.
- 2. Տիանա Արզումանեան (Շուշի) 10.01 մ.
- 3. Իրինա Պապիլեան (Կիևրի) 9.48 մ.

**4x100 Մ. ԴՐՕՇԱՐՇԱԻ**

- 1. Երեւան 48"7
- 2. Վանաձոր 52"4
- 3. Արտաշատ 55"5







## Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

- Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԻՈՒԹԵԱՆ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵԲԱՏՐԷ ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՆՏՐԷ ՍԱՆԹՐՆԻՆ ԵՒ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՓՈԽ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ԽԱՆՃԵԱՆԸ

### Թղթակից ՓԱՐԻՉ

րիզի Առաջնորդ եւ Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ Վահան Եպս. Յովհաննիսեանի, Հայ կաթողիկէ եւ աւետարանական հա-

մայնքներու ներկայացուցիչներու, մարտնի եւ յոյն ուղղափառ եկեղեցիներու պատուիրակներու, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ-

Ուրբաթ, 21 Սեպտեմբեր 2019-ին, Փարիզի արևարձաններէն իսի լէ Մուլինոյի քաղաքապետարանին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի եւ իսի լէ Մուլինոյի քաղաքապետութեան միջեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզամշակութային համալիրի շինարարութեան համաձայնագիրին պաշտօնական ստորագրութիւնը, ներկայութեամբ Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրիի, իսի լէ Մուլինոյի քաղաքապետ Անտրէ Սանթրինի, փոխ քաղաքապետ եղբ. Յարութ Խանճեանի, Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպան Յասմիկ Տոյմաճեանի, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահան Աթաբէկեանի, Ֆրանսայի մէջ Լիբանանի դեսպան Ռամի Ատուանի, Փա-







Գառնիկ Մկրտիչեանի, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Անդօ Պահարեանի, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Հրաչ Սիսեռեանի, Լեւոն Պաղտասարեանի, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Մեկուսի Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Սիսեռեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի 100-ամեակի «Կնքահայր»ներէն տէր եւ տիկին Ասում եւ Սեյրա Թնճուկեաններու:

**ԲԱՅՄԱՆ ԽՕՍՔԸ**

Բացման խօսուով հանդէս եկաւ Իսի յէ Մուլինոյի փոխ քաղաքապետ եղբ. Յարութ Խանճեան: Ան ըսաւ, որ Ֆրանսահայութիւնը այսօր կ'ապրի իր լաւագոյն օրերէն մէկը: Այս ծրագիրը սիրելի է բոլորին համար, որովհետեւ նոր ստեղծուելիք համալիրը պիտի ըլլայ բոլորին տրամադրութեան տակ: Հոն հասակ պիտի առնեն երիտասարդներ, որոնք բարձր պիտի պահեն միութեան առաջադրած մշակութային, ընկերային եւ մարզական վեհ արժէքները:

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Ապա, մարզամշակութային համալիրի ճարտարապետ Թիպօ Տէօ Լա Լուլանսի մանրամասնօրէն ներկայացուց նոր կառուցուելիք համալիրը: Ան ըսաւ, որ համալիրը պիտի կառուցուի վերանորոգելով Ալէն Միլոմը շէնքը, որուն կողքին պիտի աւելնան 400 հոգինոց թրիպլենով դաշտ մը, զանազան մարզաձեւերու յատուկ մարզասրահներ,



ժողովասրահներ եւ ճաշարաններ:

**Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ԽՕՍՔԸ**

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Արամ Սիսեռեան եւ իր հպարտութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.-ի նման միութեան մը Փարիզի մասնաճիւղին ատենապետը ըլլալուն համար: Ան նշեց, որ համալիրին կառուցման բանակցութիւնները ընթացք առին 10 ամիս առաջ, թէեւ նման երազ մը՝ արդիական մարզահամալիր ունենալու, միութիւնը ունեցած է իր հիմնադրութեան առաջին օրէն: Հ.Մ.Ը.Մ. հայ իրականութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնն է: Իր աշխոյժ գործունէութեան շնորհիւ ան գա-


նազան կողմերու հետ ունի լաւ յարաբերութիւններ:

Եղբ. Սիսեռեան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրին՝ միութեան ցուցաբերած պատմական աջակցութեան եւ համաձայնագրի ստորագրութեան ներկայութեան համար: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ. միշտ յանձնառու պիտի մնայ իրեն շնորհուած վստահութեան հանդէպ:

**Հ.Մ.Ը.Մ.-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Այնուհետեւ խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ





Հ.Մ.Ը.Մ-ը հիմնուած է Հայոց Ցեղասպանութենէն անմիջապէս ետք, ջարդերէն փրկուած որբերը հաւաքելու, անոնց ֆիզիքական եւ հոգեմտաւոր կրթութիւն ջամբելու եւ լաւ մարդեր ու տիպար քաղաքացիներ պատրաստելու համար:

«Ճշգրտած նպատակը իրականացնելը երբեք դիւրին չէ եղած, սակայն, Հ.Մ.Ը.Մ-ի համար անկարելի բան չէ եղած,- հաստատեց եղբ. Մկրտիչեան եւ շարունակեց ըսելով,- որ Հ.Մ.Ը.Մ. սկաւառական եւ մարզական

իր ճիւղերով փորձած է հասնիլ 1915-ի բոլոր որբերուն անխտիր: Այդ աշխատանքին մէջ կարեւոր դեր ունեցած է միութեան հիմնադիրներէն Գրիգոր Յակոբեանը, որ աւելի ուշ հաստատուած եւ մահացած է Ֆրանսա, վայելելով Ֆրանսացի ժողովուրդին մեծ յարգանքը»:

Մարզամշակութային համալիրի ստեղծման շարժառիթին անդրադառնալով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը ըսաւ, որ ժամանակի ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա մեծնալով եւ գործունէութիւնը ծաւալելով կարիքը ունեցաւ յարմար կեդրոնի մը, որպէսզի կարենայ յաւելեալ երիտասարդութիւն համախմբել եւ անոնց դաստիարակութեան յարմար պայմաններ ստեղծել: Հետեւաբար, տարիներու եւ սերունդներու երազ մը իրականութիւն կը դառնայ այս մարզահամալիրին ստեղծումով: Համալիր մը, որուն համար շնորհակալ եւ երախտապարտ պէտք է ըլլալ, առաջին հերթին, Լիբանանի արդի պատմութեան մեծագոյն դէմքերէն Ռաֆիք Հարիրիի, որ միշտ եղաւ ու մնաց կարեւոր նեցուկ մը հայ ժողովուրդին ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսին յատկապէս: Ան չտեսաւ իր եւ մեր մեծ երազին իրականացումը, բայց, ահաւասիկ, իր զաւակը, հօրը աշխատանքը շարունակող, Լիբանանի վարչապետ Սաստ Հարիրի մասնակից





կը դառնայ մեր մեծ ուրախութեան եւ իրագործումին»:

Եղբ. Մկրտիչեան իր խօսքին մէջ շնորհակալութեան յայտնեց իսի լէ Մուլինոյի քաղաքապետ պրն. Անտրէ Սանթինինին, որ Հ.Մ.Ը.Մ.ի հետ երկար տարիներու իր ծանօթութիւնը այսօր կը պսակէ այս համալիրին իրականացումով, ի շահ առողջ երիտասարդութեան մը կերտման, ի շահ քաղաքին փայլուն ապագայի մը ապահովման: «Վերջապէս, շնորհակալութիւն ընկերոջս, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ Հրաչ Սիսեռեանին եւ իրեն գործակից բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք անցնող տարիներուն ճիգ ու ջանք չխնայեցին նման կեդրոնի

մը ստեղծման համար», ըսաւ ան:

Իր խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան քաղաքապետ Սանթինին պարգեւատրեց Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշանով, իսկ եղբ. Յարութ Խանճեանը՝ միութեան «Մատայութեան» շքանշանով:

**ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԴԵՍՊԱՆԻՆ ԽՕՍԲԸ**

Խօսք առաւ Ֆրանսայի մէջ Հայաստանի դեսպան Յասմիկ Տորմաճեան: Ան



առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց վարչապետ Սառա Հարիրիին՝ այս ծրագիրը հովանաւորելու համար, նշելով, որ Լիբանան առաջին պետութիւններէն էր, որ հիւրընկալեց Հայկական Յեղասպանութենէն ճողոպրած հայերը, որոնք դարձան Լիբանանի քաղաքացիներ եւ կարողացան պահել իրենց մշակոյթն ու քաղաքակրթութիւնը: Տորմաճեան աւելցուց, որ իսի լէ Մուլինոն թարգմանը կը հանդիսանայ Ֆրանսա-Հայաստան-Լիբանան բարեկամական յարաբերութիւններուն: Արդարեւ, երեք երկիրներու քաղաքացիները նման նախաձեռնութիւններով կը ջանան սերտացնել իրենց պատմական կապերը:





**ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Իր կարգին, քաղաքապետ Սանթինի նշեց, որ ինչ որ այսօր վարչապետ Հարիրի կը կատարէ, կը յիշեցնէ հանգուցեալ հայրը՝ Ռաֆիք Հարիրին: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ. կարեւոր աշխատանք կը կատարէ ո՛չ միայն աշխարհասփիւռ հայութեան տարբեր համայնքներուն միջեւ, այլեւ՝ հայկական համայնքներու եւ անոնց ապրած երկիրներու ժողովուրդներուն միջեւ:

Խօսքին աւարտին, քաղաքապետ Սանթինի իսի լէ Մուլինօ քաղաքի բարձրագոյն շքանշանով պարգևատրեց Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրին:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՁԱՊԵՏԻՆ ԽՕՍՔԸ**

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Լիբանանի վարչապետ Սաատ Հարիրի: Ան շնորհակալութիւն յայտնեց իսի լէ Մուլինոյի քաղաքապետ Սանթինիի կողմէ իրեն շնորհուած շքանշանին համար, նշելով, որ Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ իր մեծ կապուածութիւնը ժառանգած է հօրմէն՝ Ռաֆիք Հարիրիէն: «Հայրս

խկապէս հայ ժողովուրդի մեծ բարեկամ մըն էր, Լիբանանի մէջ թէ այլուր: Հայերու հետ ան սերտ ծանօթութիւններ ունէր թէ՛ իր անձնական կապերուն եւ թէ՛ գործին բերումով: Ծանօթութիւններ, զորս ես պահեցի եւ ամրապնդեցի», ըսաւ ան:

Շարունակելով, վարչապետ Հարիրի հաստատեց. «Ինծի համար ուշագրաւ եղած է Հ.Մ.Ը.Մ-ի մարզական եւ ըսկառուական աշխատանքներուն կազմակերպութիւնը եւ 1974-էն ի վեր Պէյրութը կեդրոն ունեցող միութեան կեդրոնական վարչութեան նուիրումը: Հինէն ի վեր, միութեան կեդրոնական վարչութեան անդամներ կանգնած են

կողքիս: Այդ անդամներուն ցուցաբերած հաւատարմութիւնը, աշխատասիրութիւնը եւ յանձնառութիւնը կը ցոլացնեն մեր միացեալ արժէքները եւ հայ մարզական թէ սկառուական կեանքը զարգացնելու իրենց յարատեւ ջանքերը: Այս առիթով կ'ուզեմ յատկապէս ողջունել Սիսեռեան ընտանիքը»:

Ապա, խօսքը քաղաքապետ Սանթինիին ուղղելով, վարչապետ Հարիրի ըսաւ. երբ անցնող Դեկտեմբերին ծրագրին ծանօթացայ, անվարան պատրաստակամութիւնս փոխանցեցի միջազգային այս միութեան զօրակցութիւնս շարունակելու: Տպաւորուած եմ այս ծրագրով եւ այն նուիրումով, զոր կը ցուցաբերէք ձեր քաղաքի բնակիչներուն հանդէպ, որոնց կարգին կան մեծ թիւով լիբանանցիներ:

Խօսքերու աւարտին տեղի ունեցաւ մարզամշակութային համալիրի շինարարութեան ազդանշանը տրուող համաձայնագրի ստորագրութիւն:

Հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

## Թղթակից ՄՈՍԿՈՒԱ



Մ.Ը.Մ.Ի Մոսկուայի Մեկուսի մասնաճիւղին տարեկան բանակումը իրագործուեց 15-20 Յունիս 2019-ին, Մերձմուսկովեան Մոսկովի շրջանում տեղակայուած «Ecorancho» համալիրի տարածքում:

Այս տարուան բանակումը նախորդներից առանձնանում էր թէ՛ մասնակիցների թուաքանակով (90 հոգի) եւ թէ՛ տարածքային ընդգրկուածութեամբ. բանակմանը մասնակցում էին Ռուսիոյ տարբեր շրջաններից՝ Մոսկուայից, Բալաշիխայից, Իստրայից, Կալուզայից, Տարոսայից, Սերպուխովից, Վորոնէժից, Լոբնիայից, Մոսկովից, Տարոսայից եւ Պերեսլավլից ժամանած Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներ



նը ունեցանք նաեւ գալլիկական խումբ (6-11 տարեկան սկաուտներ), որի պա-

եւ աստիճանաւորներ, ինչպէս նաեւ սկաուտական փորձ չունեցող պատանիներ եւ աղջիկներ:

Կարելոր է նշել նաեւ, որ այս բանակմանը ունեցանք նաեւ գալլիկական խումբ (6-11 տարեկան սկաուտներ), որի պա-

տասխանատուն էր Հայաստանից Մոսկուա գործուղուած քոյր Թամարա Սարգսեանը:

2019 թուականի տարեկան բանակման յաջող աւարտի կապակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Մոսկուայի Մեկուսի մասնաճիւղի վարչութիւնը շնորհաւորում է բանակման բոլոր մասնակիցներին եւ խորին երախտագիտութիւն յայտնում բոլոր նրանց ովքեր աջակցել են միջոցաւման իրականացմանը:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

«Հ.Մ.Ը.Մ.Ի կողմից տասնամեակներ շարունակ կիրառուող ո՛չ Ֆորմալ, արտադպրոցական դաստիարակութեան սկաուտական մեթոդիկական լաւագոյն միջոցն է, եւ կենդանի բնութիւնը լաւագոյն միջավայրն է, որպէսզի մեր սերունդները խորապէս ընկալեն Հ.Մ.Ը.Մ.Ի ստանձնած առաքելութեան՝ հայապահպանութեան եւ սերունդների ազգային դաստիարակութեան անհրաժեշտութեան գաղափարը:

«Շնորհակալ ենք վստահութեան եւ աջակցութեան համար»:







# ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԵԿՈՒՍԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ԱՍՏԻՃԱՆԱԽՈՐԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐԸ

Թղթակից  
ՄՈՍԿՈՒԱՅԻ



**Մ**ոյն թուականի Յուլիսի 21-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկուայի Մեկուսի մասնաճիւղի անդամները մասնակցեցին աստիճանաւորական սեմինարի, ուր մանրամասնօրէն ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպչական կառուցւածքը եւ գործունէութեան հիմնարար ուղղութիւնները: Դասախօսութիւնը վարեց աշխատանքային այցով Ռուսիա ժամանած՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան անդամ եղբ. Բագրատ Եսայեան:

Սեմինարին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկուայի Մեկուսի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը, որի ընթացքում ներկայացուցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան վերջին քառամեակի գործունէութեան ամփոփ տեղեկագիրը: Քննարկումների արդիւնքում առանձնացուցին մի շարք

խնդիրներ եւ առաջարկներ՝ ուղղուած Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան հետագայ աշխատանքներին:

Ժողովի աւարտին ընտրուեց պատգամաւոր, որը Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկուայի Մեկուսի մասնաճիւղի կողմից կը մասնակցի Հոկտեմբերին Հայաստանում կայանալիք Պատգամավորական Ընդհանուր Ժողովին:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄՇԱԿՈՅԹԻ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ

Թղթակից  
ՄՈՍԿՈՒԱՅԻ

**9** Օգոստոսին, Մոսկուայի հայկական դեսպանատան մշակութային կենտրոնում, Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկուայի մասնաճիւղի անդամները մասնակցեցին Դաւիթ Աղաջանեանի (Nay DaveAmigo) նոր տեսահոլովակի առաջին ցուցադրութեան՝ նուիրուած Հայաստանի Փոլիթպոլի ազգային հաւաքականի աւագ՝ Հենրիխ Մխիթարեանին:

Յիշեցնենք, որ մի շարք հայկական մշակութային կազմակերպութիւնների հետ միասին, տեսահոլովակում նկարահանուել են նաեւ Մոսկուայի հայ սկսողները:

Դաւիթ Աղաջանեանի այս ստեղծագործութիւնը իրենից ներկայացնում է հայկական մշակութի եւ ժամանակից



հիփ-հոփ երաժշտական ոճի հրաշալի համադրութիւն, որը կարող է իւրայատուկ արդիականութիւն հաղորդել հայ մշակոյթի տարածման գործընթացին:

Նշենք, որ Դաւիթը, նոյնիսկ Nay DaveAmigo-ն հանդիսանում է Հայաստանում հիփ-հոփ երաժշտական ոճի

հիմնադիրներից մէկը: Այժմ նա գործունէութիւն է ծաւալում Մոսկուա քաղաքում, ինչպէս նաեւ զբաղւում է հասարակական գործունէութեամբ՝ իր կարեւոր դերակատարութիւնն ունենալով Ռուսիոյ հայկական սփիւռքի հայապահպանութեան գործում:



# ԵՂԲ. ԲԱԳՐԱՏ ԵՍԱՅԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ՝ ՌՈՒՍԻՈՅ ԻՎԱՆՏԵՅԵՒԿԱ, ՏԱՐՈՍԱ, ԵԱՐՈՍԼԱՒ ԵՒ ԻՍՏՐԱ ՔԱՂԱՔՆԵՐ

Թղթակից  
ՍՈՍՎՈՒԱ

Սոյն թուականի Յուլիսի 18-23-ը աշխատանքային այցով Ռուսաստանի Դաշնությունն այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչությունն անդամ եղբ. Բագրատ Եսայեան:

Առաջին օրը, Իվանտեյևկա քաղաքում տեղի ունեցավ աշխատանքային այցի շրջանակներում նախատեսուած առաջին հանդիպումը՝ Պուշկինոյի շրջանի հայկական համայնքի ղեկավար Արշակ Գրիգորեանի, համայնքի փոխ նախագահ, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի յանձնաժողովի նախագահ եւ «Արգիշտ» հայկական դպրոցի տնօրէն՝ Ազնիւ Պարոնեանի եւ Կրասնոարմէյսկ քաղաքի հայկական համայնքի պատասխանատու Յակոբ Յակոբեանի հետ:

Յաջորդող օրերուն, Յուլիսի 19-ին, 20-ին եւ 22-ին, եղբ. Եսայեան աշխատանքային հանդիպումներ ունեցավ Կարլսքայի շրջանի Տարոսա քաղաքի հայկական համայնքի ղեկավար Խաչատուր Պօղոսեանի, Եարոսլաւի շրջանի հայկական համայնքի փոխ նախագահ Ռոման Գասպարեանի եւ քաղաքի հայ համայնքի կազմակերպչական հարցերով պատասխանատու Ռաֆայէլ Աւե-



տիսեանի, ինչպէս նաեւ՝ Իստրա քաղաքի հայկական համայնքի ղեկավար Միխայիլ Համբարձումովիչի հետ:

Հ.Մ.Ը.Մ.ի Մոսկուայի Մեկուսի մասնաճիւղի վարչության կողմից հանդիպումներին մասնակցեցին վարչության ատենապետ եղբ. Գէորգ Գասպարեան, վարչական անդամ քոլերը Նայիրա Սահակեան եւ Թեհմինէ Կարապետեան:

Հանդիպումների ընթացքում ներկայացուցեցին մի քանի առանցքային նշանակութեան կէտեր, որոնք են՝

- Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու նշանակութիւնը Սփիւռքում:
  - Հ.Մ.Ը.Մ.ի զարգացումն ու տարածումը Ռուսիոյ հայկական համայնքներում:
  - Հ.Մ.Ը.Մ.-համայնք փոխ համագործակցութիւնը:
- Քննարկումների ընթացքում ձեռք բերուեցին մի շարք պայմանաւորուածութիւններ եւ մասնակիցների կողմից արձանագրուեց փոխադարձ համագործակցութեան պատրաստակամութիւն:





# ՀԱՄԱ-ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՀՆԳՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ

ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30-ԱՄԵԱԿԻՆ

## Թղթակից ԵՐԵՒԱՆ

**Հ**.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի իմբրապետական խորհուրդի կազմակերպած համա-Հայաստանեան բանակումը, որը նուիրւած էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Հայաստանում վերահիմնադրման 30-ամեակին, տեղի ունեցաւ 27 Յուլիս-2 Օգոստոս 2019-ը:

Բանակումին մասնակցեցին 167 հոգի՝ հետեւեալ մասնաճիւղերից-

1. «Գ. Յակոբեան» (Երեւան)՝ 14 ըսկառու.
2. «Շ. Քրիսեան» (Երեւան)՝ 18 ըսկառու.
3. «Յ. Հինդլեան» (Երեւան)՝ 19 ըսկառու.
4. «Տ. Խոյեան» (Երեւան)՝ 8 սկառու.
5. «Վ. Չերազ» (Երեւան)՝ 10 սկառու.
6. «Վ. Զաքարեան» (Երեւան)՝ 8 ըսկառու.
7. «Դ. Վարդան» (Երեւան)՝ 5 ըսկառու.
8. «Վ. Բարչեան» (Արմաւիր)՝ 16 ըսկառու.
9. «Վ. Չերազ» (Կիւմրի)՝ 7 սկառու.
10. «Անդրանիկ Զոհրապեան» (Վեդի)՝ 14 սկառու.
11. «Աբովեան»՝ 11 սկառու.
12. «Վ. Ռուստամեան» (Էջմիածին)՝ 5 սկառու.
13. «Հրազդան»՝ 7 սկառու.
14. «Արցախ»՝ 3 սկառու.

Օժանդակ կազմ՝ 20 հոգի: Բանակումի ընդհանուր խմբապետն էր եղբ. Համբիկ Այվազեան, օգնականը՝ քոյր Մեղրիկ Գվորեան:

Բանակման իւրաքանչիւր օրը նուիրուած էր մի թեմայի-



առաջին օրը՝ Լիզպոնի հինգին, երկրորդ օրը՝ Վարդապառին, երրորդ օրը՝ դոյատեման, չորրորդ օրը՝ բնապահպանութեան, հինգերորդ օրը՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին, իսկ վեցերորդ օրը՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 30-ամեակին:

Բանակման թեմաթիկ ծրագրային կառուցը այն դարձրեց աւելի հետաքրքրական եւ օգտաշատ:

Բանակումը ընթացաւ Հ.Մ.Ը.Մ.-

Հ.Ա.Ս.Կ-ին վայել ընտանեկան ջերմ մթնոլորտում: Բոլոր աշխատանքները կատարուեցին միասնաբար եւ ըսկառուները խանդավառութեամբ վերադարձան տուն:

Հետեւեալները ստացան լաւագոյն խմբապետի գնահատական՝ քոյրեր Միրզա եւ Նանէ, եղբայրներ Խաչիկ եւ Էրիկ: Լաւագոյն սկառուի գնահատականը ստացան եղբայրներ Էդուարդ, Ռոման, Ալպէրթ եւ քոյր Մէջրի: Շնորհակալագիրներ ստացան բանակման պատասխանատու եւ օժանդակ կազմերու անդամները:

Բանակումը ծառայեց իր նպատակին. մասնաճիւղերին համատեղել իրար հետ աւելի մօտից ծանօթանալու համար, սկառուական կեանքով ապրել բանակման ընթացքում եւ նաեւ նշել Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 30-ամեակը:







## ՀԱՄԱ-ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳԱՅԼԻԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ` ԲԻՒՐԱԿԱՆԻ ՄԷՁ

### Թղթակից ԵՐԵՒԱՆ

**Հ**.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Խմբապետական Խորհուրդի կազմակերպած Համա-Հայաստանեան գայլիկական բանակումը, որը նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Հայաստանում վերահիմնադրման 30-ամեակին, տեղի ունեցաւ Բիւրականում, 2-6 Օգոստոս 2019-ը:

Բանակումին մասնակցեցին 194 գայլիկ-արծուիկներ հետեւեալ մասնաճիւղերից-

1. «Գ. Յակոբեան» (Երեւան)՝ 33 գայլիկ-արծուիկ.
2. «Շ. Քրիսեան» (Երեւան)՝ 18 գայլիկ-արծուիկ.
3. «Յ. Հինդլեան» (Երեւան)՝ 9 գայլիկ-արծուիկ.
4. «Տ. Խոյեան» (Երեւան)՝ 8 գայլիկ-արծուիկ.
5. «Վ. Չերազ» (Երեւան)՝ 36 գայլիկ արծուիկ.
6. «Վ. Զաքարեան» (Երեւան)՝ 17 գայլիկ արծուիկ.
7. «Դ. Վարդան» (Երեւան)՝ 10 գայլիկ-արծուիկ.

8. «Վ. Բախշեան (Արմաւիր)՝ 57 գալլ արծուիկ.

9. «Վ. Չերազ» (Կիւմրի)՝ 6 գայլիկ-արծուիկ.

Բանակումի խմբապետական եւ օժանդակ կազմ՝ 28 հոգի: Ընդհանուր՝ 222 մասնակից:

Բանակումի ընդհանուր խմբապետուհին էր քոյր Մառնի Մուրատեանը:

Գայլիկական բանակումներին բնորոշ դժուարութիւնների կողքին, ակներե էր գայլիկ-արծուիկների ոգեւորութիւնը, աշխուժութիւնն ու նոր միջավայրում բնութեան գրկում հաճելիօրէն մերուելու, խաղալու եւ հաւաքական աշխատանքին ծանօթանալու մղումը:

Բանակման վերջին օրը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ին նուիրուած միջոցառում եւ փոխանցման կարգ:

Հ.Մ.Ը.Մ.ականի բարձր տրամադրութեամբ քոյրերն ու եղբայրները վերադարձան տուն, իրենց հետ տանելով անմուսանալի յուշեր:







# ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 44-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ՆՈՐԱՆՈՐ ՅԱՂԹ-ԱՆԱԿՆԵՐՈՎ ՈԳԵՒՈՐԵՑԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԾԻԲՂԵՐՆ ՈՒ ՀՐԶԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Մարտ Քեչիշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ

**Ե**րկար ամիսներու մարզական ազնիւ պայքարէ ետք, Շաբաթ, 6 Յունիսի կէս գիշերին, իրենց յաղթական աւարտին հասան Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 44-րդ մարզախաղերը, պատուոյ նախագահութեամբ Հ.Մ.Ը.Մ.ական հայորդիներ՝ տէր եւ տիկ. Կարո եւ Սօսի Էշկիեաններուն: Նաւասարդեանը նաեւ գեղեցիկ առիթ մը հանդիսացաւ մեր երախտագիտութիւնը յայտնելու հիւրընկալ այս երկրին՝ Մ. Նահանգներուն եւ շնորհաւորելու անոր անկախութեան 243-րդ տարեդարձը, որ ամէն տարի կը զուգարիպի Նաւասարդեանի եզրափակիչ շաբաթավերջին:

Նաւասարդեան մարզախաղերու եզրափակիչ շաբաթավերջը, ինչպէս միշտ, եղաւ իւրայատուկ, տպաւորիչ, համախմբող եւ մանաւանդ՝ յուսադրիչ:

Այո՛, յուսադրիչ, որովհետեւ ան ոտքի հանեց շրջանի հայութիւնը, մարդկային հեղեղի վերածեց «Պըմինկհեմ»ի շրջափակը, ուր անոնք վերապրեցան հայութեան անցեալի փառահեղ պատմութիւնը, վայելեցին հայկական մեր մշակոյթը, ականատեսը եղան մեր երի-

տասարդութեան յաղթանակներուն: Անոնք գոհունակութեամբ հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական եւ մարզական խումբերու շքերթին եւ ակոյեանական բաժակներու յանձնումին: Մէկ Խօսքով, անոնք վերապրեցան հայկական հին նոր տարին՝ Նաւասարդը:







Եւ այս բոլորին հարազատ թարգմանը հանդիսացաւ Նաւասարդեան փակման հանդիսութիւնը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 6 Յունիսի երեկոյեան, «Պըրմինկհեմ» վարժարանի ֆութպոլի մարզադաշտին վրայ, մեծ թիւով Հ.Մ.Լ.Մ.ականներու, ծնողներու, համակիրներու եւ զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներու մասնակցութեամբ:

Օրուան խօսնակներն էին՝ Թալին Աբանեան (հայերէն) եւ Մարիթա Մեծաշեան-Հարպոյեան (անգլերէն), որոնք ձեռնհասօրէն վարեցին օրուան յայտագիրը:

**ԲԱՅՈՒՄԸ**

Ժամը 6.30-ին, Արեւմտեան Մ. Նահանգներու Հ.Մ.Լ.Մ.ի մասնաճիւղերու խմբապետներու առաջնորդութեամբ, մարզադաշտ ներկայացան եւ պատուոյ հարթակին վրայ իրենց տեղերը զբաւեցին Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.Լ.Մ.ի Նաւասարդեան 44-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ Կարօ եւ Սօսի Էլչիկեաններ, «Տիպար Հ.Մ.Լ.Մ.ական» եղբ. Վարդգէս Շիրառմեան եւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան:

Գեղեցիկ անակնկալ էր պատուոյ նախագահին սկաուտական տարագով մարզադաշտ մուտքը: Առաջին անգամն էր, որ նման գեղեցիկ երեւոյթի մը դէմ



յանդիման կը գտնուէր Հ.Մ.Լ.Մ.ասէր հանրութիւնը: Երեւոյթ մը, որ հարազատ Հ.Մ.Լ.Մ.ականի տիպարը կը ներկայացնէր: Ահա՛ Հ.Մ.Լ.Մ.ի շարքերէն անցած հայորդի մը, կեանքի դժուարութիւնները քաջբար յաղթահարած եւ իր կեանքի ասպարէզին մէջ մեծ յաջողութիւններ արձանագրած, սակայն երբեք չչլացած ազգային մը, որ հպարտանքով կը կրէր սկաուտական իր տարագը: սիրելի իր այն կազմակերպութեան տարագը, որուն շարքերուն մէջ հասակ նետած, դաստիարակուած եւ ազգային նկարագիր կերտած էր: Եւ ահա՛ սկաուտական տարագով պատուոյ նախագահ մը, որ համայն աշխարհին կը բարձրաձայնէր, թէ Հ.Մ.Լ.Մ.ը այն եզակի կազմակերպութիւնն է, որ առողջ սերունդ կը դաստիարակէ եւ իր

ազգին ու հայրենիքին նուիրեալ հայորդիներ կը պարգեւէ:

**ՆԵՐԿԱՆԵՐԸ**

Բիւրաւոր Հ.Մ.Լ.Մ.ասէրներու առընթեր մարզադաշտ ներկայացած էին նաեւ Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդական Փոխանորդ Թորգոմ Եպս. Տօնոյեան, Եփրեմ Արք. Թապաղեան, Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեան եւ Արմանտո Թորգոմեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ Մհեր Տէր Օհաննէսեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Աւետիք Իգմիրլեան եւ Գօգօ Թովալեան, քոնկրէսական Պրետ Շրրմըն, նահանգային Մեքալոյտի անդամ Էնթընի Փորթմանթինօ





լային Ամերիկայի, Գանատայի, Քալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Նաւասարդեանի դրօշները: Ապա, գեղեցիկ տեսարան մը կազմելով մարզադաշտին վրայ, պատուի կանգնեցան եւ քարացած ունկնդրեցին Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները, զորս դարձեայ նուագեց Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը: Ապա, անոնք մարզադաշտի վրայ գեղեցկօրէն յարդարուած բեմին կողքին յարգանքով գետեղեցին դրօշները, որոնք ամբողջ հանդիսութեան ընթացքին ծածանեցան, յաւելեալ փայլք մը տալով հանդիսութեան:

եւ Հ.Մ.Ը.Մ.ի 43-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ՝ տէր եւ տիկ. Համլէթ եւ Կրեթթա Չրախճեաններ: Հոն էին նաեւ ՀՕՄ-ի եւ Համագգայինի Շրջանային Վարչութեանց, Հայ Դատի յանձնախումբի եւ գանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի անցեալի պատուոյ նախագահներ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներ, հովանաւորներ, նուիրատուներ, ծնողներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

մը նուիրելէ ետք պատուոյ նախագահ Կարօ Էշկիեանին, արտօնութիւն խընդրեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեանէն սկսելու հանդիսութիւնը: Դրական պատասխան ստանալէ ետք, ան հրահանգեց սկսելու հանդիսութիւնը՝ դրօշակի արարողութեամբ: Ազգային երգերու խանդավառ եղանակներու նուագով մարզադաշտ ներկայացաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը, մեծ ոգեւորութիւն ստեղծելով ներկաներուն մօտ: Մթնոլորտը աւելի շրկացաւ, երբ ժողովուրդին մէջէն ինքնապատահաբար յայտնուեց արի-արեւոյշները մարզադաշտ ներկայացան, իրենց հետ բերելով Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Հարա-

**ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆ  
ՇԸՐՄՆԵՆԻ ԵԼՈՅԹԸ**  
Պաշտօնական յայտագիրը սկիզբ առաւ քոնկրէսական Շրմբնի ելոյթով, որուն ընթացքին ան, մատնանշելով հայութեան լաւ բարեկամներէն մէկը ըլլալու իր հպարտանքը, թուեց հայութեան ուղղուած բոլոր այն բարիքները, որոնց իրականացման նպաստած է: Ան հերթով մատնանշեց Հայաստանի, Արցախի, սուրիահայերու եւ Չաւախքահայութեան տրամադրուած եւ տրամադրելի ամերիկեան նպաստները, ինչպէս նաեւ Հայաստանի տնտեսութեան հզօրացման ուղղուած իր ճիգերը եւ ուրախութեամբ յայտարարեց, թէ յառաջիկայ շաբաթներուն պիտի այցելէ Հայաստան:

**ԴՐՕՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ**  
Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային խմբապետուհի քոյր Շարլին Կիզէլեան, Հ.Մ.Ը.Մ.ի բարձրագոյն խմբապետական փողկապ





Photo By: Benjam © 2019



**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց փոխ ատենապետ եղբ. Սեւակ Կարապետեան, որ ողջունելէ ետք ներկաները, ուրախութեամբ մատնանշեց ըսելով. «Երկար ամիսներու տքնաջան աշխատանքներէ ետք, այսօր հանգամանօրէն իրենց աւարտին կը հասնին Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 44-րդ մարզախաղերը, որոնց յաջողութեան յաւատարմութեան վկան դուք՝ բոլորդ էք, որ խուռներամ ներկայ կը գտնուիք եզրափակիչ այս հանդիսութեան: Բարի եկած էք»:

Ապա, շնորհակալութիւն յայտնելով Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի եւ Գանատայի շրջաններուն մասնակցութեան համար, ընդգծեց. «44 տարիներ անընդմէջ իրականացուող Նաւասարդեան այս մարզախաղերը լոկ մրցումներ չեն, պարզապէս յաղթանակներ արձանագրող ձեռնարկներ չեն. անոնք մեր երիտասարդութիւնը մարզական մաքուր միջոցառում մէջ համախմբող ծրագիրներ են, որոնք ո՛չ միայն կը հարստացնեն Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, այլև՝ գեղեցիկ յուշերով կ'ոգեւորեն մեզ եւ մեր հաւատքը կը զօրացնեն անոր հանդէպ: Նման աշխատանքներն են յաւատարմութեան Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ նպատակներուն»:



Եղբայրը յատուկ շնորհաւորանքներ ուղղելէ ետք պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Կարո եւ Սօսի Էշկիեաններուն եւ տարուան «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Վարդգէս Շիրտրմեանին՝ Շրջանային Վարչութեան երախտագիտութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ական կամուրջը քոյր-եղբայրներուն եւ բոլոր անոնց, որոնք նպաստեցին Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան մարզախաղերու յաջողութեան եւ իսկական թարգմանը հանդիսացան Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացիր՝ բարձրացուր» կարգախօսին:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-

թեան անունով ելոյթ ունեցաւ եղբ. Վիգէն Դաւթեան, որ Հ.Մ.Ը.Մ.ը շրջանի ամէնէն գործօն եւ ազդեցիկ հայկական երիտասարդական միութիւնը նկատելով, ըսաւ. «Դուք բոլորդ էլ մեծ դեր էք ունեցել այս յաջողութիւնների մէջ, ինչպէս մեր օրինակները՝ պատուոյ նախագահներ Կարո եւ Սօսի Էշկիեանները եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» սիրելի եղբ. Վարդգէս Շիրտրմեանը»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի հօրացման մէջ երիտասարդութեան դերը ընդգծելով, ան ըսաւ. «Հաւատացած ենք, որ միութեան ապագայի բանային մեր գործունեայ երիտասարդների ձեռքին է: Մայիս ամսուան մէջ, Աթէնքում, 17 շրջաններից 40 երիտասարդ ղեկավար-





կայացուցիչը Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին եւ խոստացաւ այսուհետեւ եւս շարունակել իր ծառայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ին:

**ԱՌԱՋՆՈՐԴԻՆ  
ՀԱՅՐԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ**

Հայրական իր օրհնութիւնները փոխանցեց Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ առաջին հերթին փառք տուաւ Աստուծոյ, որ անգամ մը եւս առիթ ընծայեց համախմբուելու Նաւասարդեան մարզախաղերու փակման հանդիսութեան եւ տողանցքին առիթով:

«Մեր գաղութի զաւակներուն համար տօնախմբութեան վերածուած եւ անցեակի ուխտի օրերը յիշեցնող այս հաւաքները, անկասկած, կը հետապնդեն միասնութեան եւ բուրգութեամբ նպատակները, քաջ դիտնալով, որ ո՛չ միայն Նաւասարդեան օրերու պարուրանքը կը վերապրինք, այլ անհամբեր կը սպասենք հանդիպելու այս խաչմերուկին, ուր Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկներն ու սկաուտական շարքերը մեզ ի մի կը բերեն



Արեւմտեան Մ. Նահանգներու տարածքին, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած այս փառահեղ հանդիսութեան, որ հաւաքական կամքի եւ աշխատանքի արդիւնք է», հաստատեց սրբազան հայրը:

Ապա, «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը Հ.Մ.Ը.Մ.ի հաւատամքին խօսուն վկայութիւնը նկատելով, Առաջ-

ներ, դեսպաններ հիմը դրեցին Հ.Մ.Ը.Մ.ի երրորդ գործնական մասնիկին՝ երիտասարդական բաժանմունքին, հետեւելով մեր ռազմավարական ծրագրի ամէնէն կարեւոր կէտերից մէկին: Ապագան պայծառ ենք տեսնում. ապագան հոս է»: Ան ինքնզինք բախտաւոր նկատեց, որ ութ տարիներ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներ-

## ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 44-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

**ՓԻՆԿ-ՓՈՆԿ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի «Սասուն» մասնաճիւղ

**ԱՌԼԵԹ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի «Կարս» մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղ

**ԹԵՆԻՍ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի «Սիփան» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղ

**ԼՈՂ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ

- 2. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի «Սիփան» մասնաճիւղ

**ՎՈՒԴՊՈՒ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ. Չարաւային Ամերիկա
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթեպելլոյի մասնաճիւղ

**ՖՈՒԹՊՈՒ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի «Անի» մասնաճիւղ
- Հ.Մ.Ը.Մ.ի «Ազատամարտ» մասնաճիւղ

**ՊԱՍՔԵԹՊՈՒ**

- 1. Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» մասնաճիւղ
- 2. Հ.Մ.Ը.Մ.ի «Մասիս» մասնաճիւղ
- 3. Հ.Մ.Ը.Մ.ի «Շանթ» մասնաճիւղ





նորը փառք տուաւ Աստուծոյ, որ հայ ժողովուրդին շնորհած է Հ.Մ.Լ.Մ-ի նման կազմակերպութիւն մը, ինչպէս նաեւ երախտիք յայտնեց անցեալի եւ ներկայի բոլոր Հ.Մ.Լ.Մ-ականներուն, որոնք «Հ.Մ.Լ.Մ-ը վերածեցին մարմնական թէ հոգեւոր դաստիարակութեան հնոց եւ մեր նորափթիթ կարգապահ փոքրերուն, մատղաշ պատանիներուն եւ խոստմնալից երիտասարդութեան իսկական առաջնորդներ դառնալու դարբնոց»:

**ՏՈՂԱՆՅՔԸ**

Փոխանցուած երեք տպաւորիչ պատգամներէն ետք, տեղի ունեցաւ հանդիսութեան գլխաւոր առանցքը հանդիսացող եւ այնքան սպասուած տողանցքը: Հ.Մ.Լ.Մ-ի Շրջանային Վարչութեան

շեփոխութեմբի ազգայնաշունչ եղանակներով ոգեւորուած, յաջողաբար մարզադաշտ ներկայացան Հ.Մ.Լ.Մ-ի Հարաւային Ամերիկայի եւ Գնանատայի շրջաններու խումբերը, որոնց հետեւեցան «Հրաշք»ի անդամները, Հ.Մ.Լ.Մ-ի երիտասարդական բաժանմունքն ու շրջանի նորագոյն՝ Հ.Մ.Լ.Մ-ի «Կիլիկիա» միւսուրէն մինչեւ շրջանի հիմնադիր Լուս Անճելըրի մասնաճիւղի սկաուտական եւ մարզական խումբերը, յանձնախումբերն ու անդամները, իրենց վարչութիւններուն գլխաւորութեամբ:

Անոնք տողանցեցին հպարտ եւ ինքնավստահ, հրճուանքով բարեւեցին ներկաները, իրենց տեղերը գրաւեցին մարզադաշտին վրայ եւ հետեւեցան յանձնումի արարողութեան մարզական մրցումներու յաղթանակի բաժակներ

րու, որոնք յանձնուեցան Առաջնորդին, Կարօ եւ Սօսի էչկիեաններու, Վարդգէս Շիրտրմեանի, Էնթրնի Փորթմանթիոյի եւ Յակօր Թիւֆէնքճեանի ձեռամբ:

**ԲԱԺԱԿՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄԸ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ**

Մասնաճիւղերու ամիսներու երկար պայքարին արդար արդիւնքը հանդիսացող բաժակներուն յանձնումը (արդիւնքները տեսնել առանձին՝«Մ.») մեծապէս ոգեւորեց ներկաներն ու յատկապէս՝ մասնաճիւղերը:

Այնուհետեւ, Շրջանայինի խմբապետուհի քոյր Շարլին Կիւզէլեան մարզադաշտին վրայ ծածանած Նաւասարդեան դրօշը յանձնեց Շրջանային Վարչութեան ատենապետին, որ իր հերթին զայն նուիրեց պատուոյ նախագահին:

Հանդիսութեան պաշտօնական յայտագիրին վերջին բաժինով ելոյթ ունեցաւ երգիչ Վարանդը, որ ապրումով ներկայացուց Հ.Մ.Լ.Մ-ի նուիրուած գեղեցիկ երգերու փունջ մը:

Այնուհետեւ Նաւասարդեան խրախճանքը շարունակուեցաւ փառատօնի շրջափակին մէջ, ուր շրջանի սիրուած արուեստագէտներուն հրամցուեցած երգերուն ընկերակցեցաւ հրավառութիւնը, աւելի խանդավառելով արդէն իսկ գուարթ մթնոլորտը:

**Լուսանկարները ՊԵՐՈՃ ԸՄՄՃԵԱՆԻ**







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 29-ՐԴ ԽԱՂԵՐԸ ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԷՋ

## Թղթակից ՆԻՒ ԵՈՐՔ



Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու 29-րդ Նաւասարդեան խաղերը տեղի ունեցան Նիւ Եորքի մէջ, 4-7 Յուլիս 2019-ին, հրովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Անուշաւան Արք. Դանիէլեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան, հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Նիւ Եորքի մասնաճիւղին եւ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեանի: Բացման հանդիսութեան ներկայ էր ՀՕՄ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սանտրա Վարդանեան:



### ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Նաւասարդեան խաղերու բացման հանդիսութիւնը ընթացք առաւ վայրկեան մը յոտնկայ լուծութեամբ՝ յարգելու համար յիշատակը Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Տէր Մուշեղ Ա. Քհնյ. Տէր Գալուստեանի, որ տարիներ շարունակ զօրավիգ կանգնած է Հ.Մ.Ը.Մ.ին:

Ապա, ներկաները վայրկեան մը եւս յոտնկայ յարգեցին յիշատակը տարիներ շարունակ Հ.Մ.Ը.Մ.ին ծառայած, միութեան «Ծառալուծեան» շքանշանակիր, Ուաշինկթընի մասնաճիւղէն եղբ. Համօ Սարտարպէկեանցի: Այս առիթով, Շրջանային Վարչութիւնը յայտարարեց, թէ Նաւասարդեան խաղերու երէց տղոց փոխադրի բաժակը յաջորդող հինգ տարիներուն պիտի կրէ եղբայր Համոյին անունը:

Օրուան հանդիսավար եղբ. Նազարէթ Ապաճեան բարի գալուստի խօսքէ ետք, յաջորդաբար հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.Ի Նիւ Եորքի մասնաճիւղի ատենապետ եղբ. Էտի Թորոսեանը, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գայէրեանը, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեանը եւ Առաջնորդը, որպէսզի փոխանցեն իրենց պատգամները:

### ՄԱՐԶԱՆԱՂԵՐԸ

Երեք օրերու վրայ երկարող խաղերու ընթացքին, դաշտերու վրայ թէ ամէնուրեք, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներ հանդիպեցան իրենց հարազատներուն, որոնք ժամանած էին Արեւելեան Մ. Նահանգներու գանազան մասնաճիւղերէն:

Բոլոր մարզիկները, սկստուները եւ համակիրները, խումբ առ խումբ ժամանեցին Նիւ Եորք, ուր տեղի ունեցաւ մասնաճիւղերու պատասխանատուներու կարճ ժողով մը, բացատրելու համար մարզախաղերուն դասաւորումը, օրէնքները եւ կարգապահական պայմանները:

Հ.Մ.Ը.Մ.Ի տարեկան այս մարզախաղերը առիթ մըն են սատարելու Հ.Մ.Ը.Մ.Ի վսեմ նպատակին, երբ շրջանի մասնաճիւղերէն ժամանած Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ, Հ.Մ.Ը.Մ.Ի շունչով եւ ոգիով գօտեպնդուած, կր հաւաքուին Նաւասարդեան խաղերու դրօշին տակ՝ մրցելու մարզական ազնիւ ոգիով, ստեղծելու խանդավառ մթնոլորտ, ծառայելու «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանին, միշտ ի միտի ունենալով, որ այս խաղերէն յաղթական դուրս պիտի գայ Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքը միայն:

Ծնողներ ու բարեկամներ ոգեւորիչ խանդավառութեամբ մը ներկայ էին դաշտերու մէջ, քաջալերելով իրենց մարզիկները, որպէսզի նորանոր յաղթանակներ արձանագրեն իրենց մասնաճիւղերուն համար,







առանց անդրադառնալու, թէ Հ.Մ.Ը.Մ-ին իրենց անդամակցութիւնը ինքնին մեծագոյն յաղթանակն է հասցի դիմազօծի պահպանման մեր ճիւղերուն մէջ:

Այս առիթով հրատարակուեցաւ յուշամատեան գրքոյ մը: Մարգախաղերու նախավերջին օրուան երիտասարդական պարահանդէսը խանդավառեց երգչուհի Սարինա Քրոս: Յաջորդ օր տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը:

Յետադարձ ակնարկ մը նետելով մարգախաղերուն վրայ, առանց վարաներու կարելի է հաստատել, թէ շրջանը հարուստ է ազգային բարձր գիտակցութեան տէր կամաւորներով, ըլլան անոնք ծնողներ թէ պատասխանատուներ:

Անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը յաղթական դուրս եկաւ:

Յատուկ գնահատանքի արժանի են հիւրընկալ Նիւ Եորքի մասնաճիւղը եւ Շրջանային մարգական յանձնախումբը:

**ՅԱՂԹԱՆԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ**

Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսին բարի գալուստի խօսք արտասանեց հիւրընկալ մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Էտի Թորոսեան: Ապա, յաջորդաբար խօսքեր արտասանեցին ՄԱԿ-ի մօտ Հայաստանի դեսպան Մհեր Մարգարեան, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գայսէրեան, Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի անդամ Խաթակ Մկրտիչեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան եւ Թեմի փոխ առաջնորդ Սահակ Ծ. Վրդ. Եմիչեան:

Երեկոյն խանդավառեց երգիչ Սադօ Թաշճեան, որ այս առիթով յատկապէս հրաւիրուած էր Մոնթրէալէն: Նոյն երեկոյն տեղի ունեցաւ բաժանիներու եւ յուշատախտակներու բաշխում: «Ամէնէն անելի բարեխաղաց մասնաճիւղ»-ի բաժակը ստացաւ Նիւ Ճրրգիի մասնաճիւղը, «Տիպար մասնաճիւղ»-ի «Եղբ. Արամ Կաւուր» բաժակը ստացաւ Ֆիլատելֆիոյ մասնաճիւղը: Երէջ տղոց վոլիպոլի «Եղբ. Համօ Սարտարապէկեանց» բաժակը ստացան Փրովիտընսի եւ Մերիմաք Հոփիտի մասնաճիւղերը: Երէջ տղոց պասքեթպոլի «Եղբ. Մարք Ալաչայեան» բաժակին տիրացաւ Շիքակոյի մասնաճիւղը:

Ստորեւ՝ մասնաճիւղերուն ընդհանուր դասաւորումը-

1. Նիւ Եորք 89 կէտ
  2. Շիքակօ 40 կէտ
  3. Ուաշինկթըն 35 կէտ
  4. Նիւ Ճրրգի 29 կէտ
  5. Պոսթըն 13 կէտ
  6. Ֆիլատելֆիա 5 կէտ
  7. Փրովիտընս 3 կէտ
- Մերիմաք Հոփիտ, Ալպընի

**ՄՏԱՅԱՆՔ**

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ ԵՒ ՅՈՒՇԵՐ (Ա. հատրր)  
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Յալէպ, 2019:

\*\*\*

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԳԻՐՔ

Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Յալէպ, 2018:

\*\*\*

100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՄՍԵԱՆ

Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի շրջանի:

\*\*\*

«ԴԵՊԻ ՅԱՂՈՒՆԱԿ...»  
 Հ.Մ.Ը.Մ-ի 100-ԱՄԵԱՅ ԵՐԹԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ 100 ՍՏԵՂՈՒԳՈՐԾՈՒԹԻՒՆ, 100 ԴԵՄՔ

Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, Պէյրութ, 2019:



# Հ.Մ.Ը.Մ. ՄՈՍԿՈՒԱՅԻ ԲԱՆԱԿՈՒՄ 2019

